

Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացե՛ք!



№ 50


ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿՈՄԻ ԿԱԶՄՐԱՋՆԻ

ՅԵՐԵՎԱՆ

1983



№ 50

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

Հ 28480
Ա 16/6



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆԻ ԿԱԶՄԱՔՆԻ

Արքոզըց Դար Հակոբյան

Գլաւիշտ 8716 (բ), Հրան հ 5310, Գառվեր 2122, Տիրած 2000

Համակած և արտադրաւթյան 19 Խականի 1938

Ստորագրված և տպագրելու 18 Օյէմբերի 1938

Պետրասի տպարտն - Ծերեկան

ԳՅՈՒԻ ԲՅՈՒԻՉԵՆ

1

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՅՈՒՉԵՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տեղական տնտեսությունը կառավարելու ապակենուրոնացման դադափարը լրիվ արտացոլումն և գտել տեղական բյուջեյի գիֆերեննցիայի մեջ։ Այդ գիֆերեննցիայի եյտի յունը կայացել է նրանում, վոր տեղական տնտեսության առանձին մասերը կառավարելու խնդիրները բաշխված են տեղական խորհուրդների մեջ, նրանց բոլոր ողակներում՝ ներառյալ Խորհրդային իշխանության ստորին ողակը՝ գյուղխորհուրդը։ Վերջինին հատկացվել են բյուջենուային իրավունքներ, վորոնք ունեն հսկայական քաղաքական, տնտեսական և ֆինանսական նշանակություն։

Դյուզական խորհուրդը հանդիսանում և ողեաական իշխանության այն մարմինը, վորը ամենից մոտ և բնակչությանը։ Նա, իհարկե, ավելի լավ գիտե և ավելի լավ և տեսնում, թե ի՞նչպիսի կարիքներ ունի գյուղը և ի՞նչ-պես կարելի յև ավելի հեշտ և ավելի շուա այդ կարիքները բավարարել։ Կազմելով և կատարելով իր բյուջեն՝ գյուղխորհուրդը մանրամասնորեն խորանում և իր տնտեսության կարիքների մեջ, լուծում և նրա առաջ կանգնած բոլոր խնդիրները և դառնում և գյուղի հսկական տերը, մնտեսական քաղաքականության և գյուղի կուլտուրական կյանքի իրական ղեկավարը։

Դասակարգային անողոք պայքարը, կուլակության գիմադրությունը գյուղում տարվող Խորհրդային իշխանության բոլոր միջոցառումների նկատմամբ՝ հատկապես պահանջում են, վորակեսդի գյուղի խորհրդուրդները հանդիսանան պրոլետարիատի գիլտատուրայի հղոր ուղմական մարմինները։

Այդպիսի լուրջ և պատասխանատու պարտականությունների իրադուրծումը գյուղխորհուրդների կազմից

հնարավոր ե միայն այն գեղքում, յերբ նրանք ունենան
իրենց ինքնուրույն բյուջեները։ Միայն այդ պայմաններում
գյուղխորհուրդը կարող ե լինել գյուղի սոցխուլիստական
վերակառուցման իսկական կենտրոնը և գլխավորը՝
իրենց տնտեսության վերակառուցման ուղիներով
ընթացող աշխատավոր գյուղացիական մասսաների շարժումը։ Հակառակ գեղքում գյուղխորհուրդը չի կարող
իրագործել նրա վրա դրված խնդիրները և կդնա վոչ
թե գլխավորելով մասսաների շարժումը՝ գյուղատնտեսությունը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու ուղղությամբ, այլ այդ շարժման պոչից։

Ֆինանսական կողմից, ինչպես և տնտեսական-քաղաքական տեսակետից, գյուղխորհուրդների ինքնուրույն բյուջեների կազմակերպումը ունի հակայական նշանակություն։ Գյուղխորհուրդի ինքնուրույն բյուջե ունենալը նախ և առաջ զգալի չափով բարձրացնում և գյուղխորհուրդի անտեսական ույժը, աշխատանքում և նրա աշխատանքները, լայնացնում և յեկամտային աղբյուրները, լավացնում և այդ աղբյուրների հաշվառումը, խթան և հանդիսանում բնակչության միջոցները առավել լրիվ չափերով ներքրավելու աշխատանքներին և վերջապես ոժանդակում և մոբիլիզացիայի յենթարկելու գյուղական աշխատավոր բնակչության հետաքրքրությունը և ուշադրությունը իր Փինանսական տնտեսության վրա։

Թված նկատառումները հիմք են ծառայել, վոր Խորհրդային իշխանությունը գեռ 1925/26 տնտեսական տարում անհրաժեշտ և համարել կազմակերպել գյուղական ինքնուրույն բյուջե։

Սակայն հաշվի առնելով, վոր ամենուրեք գյուղական բյուջեներ կազմակերպելը կհանդիպի զգալի դժվարությունների՝ ԽՍՀՄ կղկ. իրավունք և վերապահել դաշնակից Հանրապետությունների կառավարություններին սահմանել գյուղական բյուջեների կիրառման պլան, կարդ և ժամկետներ այն պայմանով, վորպեսզի համատրած կուեկտիվացման ըրջաններում գյուղական բյուջեներն անպայման կիրառվելիքին 1931թ.։

Մեղ մոտ, Անդրեկովիլիսասում ինքնուրույն գյուղական բյուջեներ կազմակերպելու խնդիրը վորոշ չափով այլ կերպ եր դրված, քան մյուս զաշնակից Հանրապետություններում։ Մինչդեռ մյուս հանրապետություններ

րում դեռ մինչ 1928 թ. գյուղական խորհրդների ընդհանուր քանակից 20% ից ավելին արդեն ինքնուրույն բյուջե ունելին, ընդհակառակը, Անդրկովկասյան Ֆեղարացիային անդամակցող վոչ մի հանրապետության մեջ, մինչև 1930 թ. գյուղական բյուջե չի կազմակերպվել: Մեր հանրապետությունների 1930 թ. վարչական կառուցման բարեփոխությունից հետո, միայն կազմակերպեցնեցին գյուղական բյուջեներ Վրաստանում, վորտեղ ամելի նպաստավոր պայմաններ գոյություն ունեցին: Բաներ նրանումն ե, վոր Վրաստանի գյուղական խորհուրդը շրջատ ամելի ուժեղ եր, քան Ադրբեյջանի և Հայաստանի գյուղխորհուրդը: Հայաստանում մեկ գյուղխորհուրդին բնկում եր միջին հաշվով մոտ 1300 շունչ, իկո տերբիտարիան—մոտավորապես 29 քառ. կիլոմետր, Ադրբեյջանում չնչերը հավասար եյին 1800, իսկ տերրտորիան՝ 83 քառ. կիլոմետր: Մինչդեռ Վրաստանում արդեն գյուղխորհուրդի բնակչության միջին թիվը կազմում եր 3800 շունչ, իսկ տերբիտարիայի միջին չափը՝ 118 քառ. կիլոմ.՝ Այնուհետև Վրաստանում գյուղական բյուջեներ կազմակերպելուն զգալի չափով նպաստել ե այն հանդամանքը, վոր հիմնական վարչական կառուցման բարեփոխությունը այդ հանրապետություններում այնքան էլ ուժեղ փոփոխությունների չենթարկեց ողակի թեմին, սոսկ վորոշ չափով խոչըրացվեց և վերանվանվեց գյուղխորհուրդը: Թեմի բյուջեն կազմելու փորձառությունը գյուղխորհուրդների մեծամասնության մեջ պահպանվել եր, վորը և հնարավորություն տվեց 1930 թ. ընդհանուր 682 գյուղխորհուրդներից ինքնուրույն բյուջեներ կազմակերպել 316 գյուղխորհուրդներում:

Ադրբեյջանում 1930 թ. ձեռնարկվել եյին գյուղական բյուջեներ կազմակերպելու միայն փորձներ: Ինքնուրույն բյուջե կազմել եյին 90 գյուղխորհուրդում ընդհանուր 1167 գյուղխորհուրդներից: Սակայն փորձը ցանկացած արդյունքը չտվեց, վորովհետև այլ 90 գյուղխորհուրդում փաստուել բյուջեն չի անցկացվել:

Հայաստանում բոլոր գյուղխորհուրդների համար բյուջեներ կազմելու առաջին փորձը պետք ե համարել 1932 թ., թեև արդեն 1931 թ. կար Հայկենտգործկոմի վորոշումը գյուղբյուջեների վերաբերյալ, ըստ վորում

սպետք և ընդգրկվել յին բոլոր գյուղխորհուրդների 600/0-ը:
1931 թ. միայն փորձեր են կատարվել մի քանի գյուղ-
խորհուրդների համար յեկամտային, ծախքային նախա-
հաշիվներ կազմելու վերաբերյալ (իտուրդի են մոտ 15 յե-
կամտային-ծախքային նախահաշիվներ կոտայքի և Վաղ-
պատի շրջաններում), վորոնք վոչ մի գործնական նշա-
նակություն չեն ունեցել և չեյին ել կարող ունենալ,
քանի վոր նրանք վոչ մի չափով չեյին կատակեցված հա-
մաշրջանային բյուջեյի հետ:

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր գիրեկտիվ մար-
մինների վորոշումները, թե՛ միութենական, թե՛ Անդր-
կովկասյան և թե՛ Հանրապետական, իր ժամանակին չեն
կատարվել:

Գյուղական բյուջեներ կազմելու վերաբերյալ
Անդրկենտգործկոմի դիրեկտիվը չկատարելու հիմնա-
կան պատճառը, բացի գյուղխորհուրդների վորձառու-
թյան բացակայությունից, յեղել և նաև գյուղական
ֆինանսական աշխատավորների կաշըբերի բացակայու-
թյունը: Դրա հետ միասին բացասական դեր և խաղացել
և այն հանգամանքը, վոր տեղերը չդնահատեցին գյու-
ղական բյուջեների անցկացման վողջ քաղաքական-
տնտեսական նշանակությունը:

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԵՎ ԳՈՒՅ- ՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Գյուղական խորհուրդների բյուջետային իրավունք-
ները, այսինքն այն իրավունքները, վոր ունեն գյուղա-
կան խորհուրդները գյուղական բյուջեները կազմելու,
հաստատելու և կատարելու ասպարեզում, կարգավոր-
վում են ԽՍՀՄ և ԱՍՖԽՀ «Տեղական ֆինանսների վե-
րաբերյալ կանոնադրությամբ», վորի մեջ հետապայում
մացվել են փոփոխություններ և լրացնեներ՝ ԽՍՀՄիու-
թյան գյուղխորհուրդներ կազմակերպելու վերաբեր-
յալ հիմնական կանոններով՝ հաստատված ԽՍՀՄիու-
թյան կենտրոնական Գործադիր կոմիտեյի կողմից
1930 թ. փետրվարի 3-ին, Երջանային Գործադիր կոմի-
տեների քաղաքային և գյուղական խորհուրդների բյու-
ջետային իրավունքների վերաբերյալ ժամանակավոր
կանոնդրությամբ, վորը հաստատված և Անդրկոմիկաս-
յան կառավարության կողմից 1930 թ. նոյեմբերի 12-ին

և վերջապես 1931 թ. դեկտեմբերի 21-ին հանրապետական և տեղական բյուջեների վերաբերյալ համամիութենական որոշումը:

Խնչպես ե լուծվում, գործող որենսդրական ակտերի հիման վրա, գյուղական խորհուրդների բյուջեների բյուջետային իրավունքների հարցը:

Ա.Ս.Հ.Մ. գյուղական խորհուրդների կազմակերպման վերաբերյալ հիմնական կանոնները սահմանում են, վոր գյուղական խորհուրդների բյուջեները սպասարկում են տեղական նշանակություն ունեցող վարչական, տնտեսական, հասարակական և կուլտուրական կարիքները: Հիմնականում գյուղական բյուջեների վրա յենկում գյուղական խորհուրդների, ժողովրդական լուսավորության և առողջապահության տեղական հիմնարկների պահպանումը, թոշակներ վճարելու համար կատարվող ծախքերը, ճանապարհային գործի համար, գյուղական բարեկարգության, ինչպես և այն ծախքերը, վորոնք կապված են գյուղական խորհուրդների իրավասությանը հանձնված ձեռնարկությունների ու դույքի պահպանման հետ:

Այլ ծախքերը ծածկելու համար գյուղական բյուջեյին հանձնվում են՝ առաջինը գյուղխորհուրդի տերիստորիայի վրա գտնվող տեղական նշանակություն ունեցող գույքից և ձեռնարկություններից ստացվող վոչ հարկային յեկամուտները: Դրանց մեջ մտնում են վոչ միայն գյուղխորհուրդի տրամադրության տակ գտնվող դույքից և ձեռնարկությունից ստացվող յեկամուտները, այլև այն գույքերի և ձեռնարկությունների յեկամուտները, վորոնք հանձնվում են նրանց «Հողաշխարարության հողագործության վերաբերյալ հիմնական կանոնների» 32-րդ հոդվածի հիման վրա, ինչպես և ուրիշ կազմակերպությունների կողմից, որինակ՝ կոլեկտիվացման կատակեցությամբ լուծարվող հողային հասարակությունների և Փոկերի կողմից:

Յերկրորդ, գյուղական բյուջեյի յեկամուտային մասին մեջ մտցվում են գյուղխորհուրդի տերիստորիայի վրա գտնվող տեղական հարկերի և տուրքերի մուծումները, միասնական գյուղատնտեսական հարկից և մյուս հարկերից ու յեկամուտներից կատարվող մասհանումներն,

այն չափով, վորոնք սահմանված են դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ, և դյուղխորհուրդի տերիտորիայի վրա իրացվող պետական փոխառություններից կատարվող մասհանումները։ Վո՞ր փոփոխություններից և ի՞նչ չափերով են հանձնվում մասհանումները տեղական բյուջեյին՝ ամեն մի փոխառության համար սահմանված ե առանձին, նրա բաց թողնելու ժամանակ։ Որինակ՝ 1932 թ. «Հնդկամյակի Յ-րդ վոճական տարվա փոխառության համար սահմանված ե մասհանումը 50 % օրի չափով, իսկ 4-րդ՝ յեզրափակման տարվա փոխառության համար— 15 % օրի չափով այն դումարներից, վորոնք իրացվում են գյուղական խորհուրդների տերիտորիայի վրա։

Բացի այդ, գյուղական բյուջեյի մեջ մտցվում են նույնպես բնակչության ինքնարկումից ստացված միջոցները, ըստ վորում որենքը վերապահում ե, վոր թեև այդ միջոցները մտցվում են բյուջեյի մեջ, բայց գյուղխորհուրդի կողմից կարող են ծախսվել միայն այն կարիքների համար, վորոնք սահմանված են տվյալ գյուղի քաղաքացիների ընդհանուր ժողովի վորոշմամբ։

Զափազանց կարևոր ե հանդիսանում գյուղխորհրդի և կոլտնտեսությունների բյուջետային փոխարքերության հարցը։ Գյուղխորհուրդների կազմակերպման վերաբերյալ «Հիմնական կանոնադրության» 17-րդ հոդվածն ասում ե՝ «աշխատավոր բնակչության առավել լավ սպասարկման, նրա սոցիալիստական դաստիրակման և նրա կենցաղը սոցիալիստական սկզբունքներով վերակառուցելու նպատակով, գյուղխորհուրդը ղեկավարում է զանազան կոլտնտեսության և կենցաղային հիմնարկների, հիվանդանոցների և սանհիտարական հիմնարկների կազմակերպումն ու աշխատանքի դրվածքը, ինչպես և կտրմակերպում է գյուղի բարեկարգությունը»։ Թաված ձեւնարկելումների համար անհրաժեշտ ծախրքերը գյուղխորհուրդը անց և կացնում իր բյուջեյով, պահելով համապատասխան հիմնարկություններ և կատարելով ծախքեր գյուղի բարեկարգման համար։ Իսկ վորովհետեւ կոլտնտեսությունները իրենց մաքուր ու գումաներից կատարվող մասհանումների միջոցով կազմակերպում են ֆոնդեր, վորոնք հատկացված են նրանց կենցաղային և կոլտուր-լուսավորական հիմնարկների

սպասարկումը բարելավելու համար, ապա նրանք այդ ֆոնդերը պետք եւ հանձնեն գյուղխորհրդին, վորը մտցնում եւ այդ իր բյուջեյի յեկամտային մասը (Հիմնական կանոնների 21-րդ հոդ. «ղ» կետ): Գյուղխորհությունները սպասարկող կուլտուր-կենցաղային հիմնարկների վրա: Վոչ մի այլ նպատակների վրա նրանք ծախսվել չեն կարող:

Այսուհետեւ «հիմնական կանոնների» նույն 21-րդ հոդ. «ը» կետի համաձայն գյուղական բյուջեյի յեկամտային մասի մեջ մտցվում են մասհանումներ և նպատակային յեկամտային հողվածներ, վորոնք հանձնվում են գյուղական խորհրդի բյուջեյին՝ կոլեկտիվ տնտեսությունների վորոշմամբ: Դա նշանակում ե, վոր կուտընտեսությունները կարող են կառուցել դպրոց, հիվանդանոց և այլ կուտուր-լուսավորական հիմնարկություն կամ անցկացնել վորեւ մի ճեռարկում գյուղի բարեկարգման վերաբերյալ: Դրա համար նրանք կամ առանձնացնում են վորեւ յեկամտային հողված, կամ կատարում են մասհանումներ իրենց ոգուտներից: Քանի վոր կուտուր-լուսավորական հիմնարկների կազմակերպման, ինչպես և գյուղի բարեկարգության կազմակերպման ղեկավարությունը ամբողջությամբ պատկանում է գյուղխորհություններին, ապա առավելապես նպատակահարմար ե, իհարկե, գրանց իրագործելու համար միջոցները նույնպես հանձնել գյուղխորհրդին: Սակայն այդպիսի ղեկավարում հանձնելու հարցը պետք եւ լուծվի իրենց՝ կուտնահանությունների վորոշմամբ, մինչդեռ կուտուր-լուսավորական և կենցաղային հիմնարկների բարեկարգման ֆոնդերին հատկացված միջոցներն անպայման հանձընդում են գյուղական բյուջեյի յեկամտին:

Դրանով միանդամայն վերօշակի չեւ դառնում դյուղխորհությունների վերը աշխատավոր բնակչության սոցիալիստական դաստիարակման և նրա կենցաղի սոցիալիստական վերակառուցման դրդում: Գյուղխորհություն հանդիսանում ե այդ աշխատանքի զեկավարը՝ ամեն վործում, անկատի նրանից, թե ի՞նչ միջոցների հաշվին ե նա իրագործվում:

Գյուղխորհությունների գույքային իրավունքների բնադրավառում պետք եւ մատնանշել, վոր «հիմնական կանո-

նաղըության» համաձայն (Հոդ. 14-րդ), համատարած կոլեկտիվացման շրջաններում լուծարքվող հողային հասարակությունների իրավունքները և պարտավորությունները հանձնված են գյուղխորհուրդներին:

Գյուղական բյուջեյի նյութական բաղան լայնացնելու գործում, վոր մեղ մոտ գեռ թույլ է, դա ունի ահազին նշանակություն:

Համաձայն «տեղական խորհրդի բյուջեային իրավունքների վերաբերյալ ժամանակավոր կանոնադրության» գյուղխորհուրդին վերապահված ե բյուջեյի և նրա կատարման հաշվետվությունը: Գյուղական բյուջեն և նրա կատարման վերաբերյալ հաշվետվությունը վերջնականացնելու հաստատվում են Շրջանային Գործադիր կոմիտեյի կողմից, իսկ այն դեպքում, յեթք գյուղխորհուրդները մանում են քաղաքի կազմի մեջ և առանձնացված են վորպես ինքնուրույն միավոր, վերջնականապես այդպիսիք հաստատվում են քաղխորհրդի կողմից:

Տեղական հարկերի և տուրքերի տեսակները, շրջանի վողջ տերիտորիայի վրա, ինչպես և դրանցից այնպիսիների ցանկը, վորոնք մուծվում են գյուղբյուջեն, սահմանում և շրջանային գործադիր կոմիտեն և հաստատում և շրջանային խորհուրդների համագումարը: Նույն այդ կարգով ել հաստատվում են տեղական հարկերի ու տուրքերի գյուղքները: Այնուհետեւ գյուղխորհուրդը լուծում է այն խնդիրները, վորոնք կապված են գյուղխորհրդի տրամադրության տակ գտնվող գույքերից և ձեռնարկելություններից ստացվող յեկամուտների կանձման հետագման, տարկետելու և զիջելու հետ:

Բյուջեյի կատարման բնագավառում գյուղխորհուրդը բացառիկ դեպքերում իրավունք ունի վարկերը մի պարագաֆից մյուսը փոխադրելու, ինչպես և առանձին հիմնարկություններին յերրորդ աստիճանի վարկերի կարգադրության իրավունք վերապահելու հարցերը կուծելու: Գյուղական բյուջեների վարկերի մի հատվածից մյուսը փոխադրելու հարցերի լուծման իրավունքը պատկանում է Շրջանային Գործադիր կոմիտեյին:

Վերջապես գյուղխորհուրդին իրավունք և վերապահված՝

- Ներքեռում բերված, տեղական խորհուրդների գույքային իրավունքի վերաբերյալ, որենքի հիման վրա կնքել փոխառություններ և կատարել այլ վարկային գործարքներ:
 - Կորանտեսությունների կողմից հանձնված միջոցների վերաբերյալ կարդաղըռություններ անելը:
 - Հաստատել ինքնահարկիման վերաբերյալ քաղաքացիների ընդհանուր ժողովների վորոշումները, ինչպես և ինքնահարկիման բաշխումը, այդ միջոցների գտնածումը և ծախսումը:
- «Բյուջեաային իրավունքների ժամանակավոր կառագրությունը» սահմանում ե, վոր գյուղխորհուրդին իրավունք և վերապահվում, գյուղխորհուրդի տրամադրության տակ դանվող գույքերի և ձեռնարկությունների վրա կարդաղըռություններ անելու, ինչպես և այդ գույքերը և ձեռնարկությունները ճիշտ կերպով շահադրքելու և կապալով տալու վրա հսկողություն ունենալու:

Գյուղխորհուրդների այդ իրավունքները, նրանց կցված գույքի ողոտագործման վերաբերյալ, կարգավորվում են տեղական խորհուրդների գույքային իրավունքների մասին որենքով, վորը հաստատած և Անդրկովեայան կառավարության կողմից 1930թ. ողոտագործին:

Տեղական խորհուրդների և, մասնավորապես, գյուղական խորհուրդների գույքային իրավունք ասելով հարկավոր և հասկանալ այդ խորհուրդներին վերապահված ված գույքի վրա կարգադրություններ անելու իրավունքը և մյուս խորհուրդների, հիմնարկությունների և կաղմակերպությունների հետ զանազան տեսակի գործարքներ կատարելու իրավունքը:

Գույքային իրավունքների վերաբերյալ որենքի համաձայն, տեղական խորհուրդները կարող են իրենք անմիջաբար շահագործել իրենց տրամադրության տակ դանվող հողերը, ձեռնարկությունները և մյուս գույքեր, ինչպես և փոխադրել այդ տնտեսական հաշվարկի, կապալով տալ և որենքով սահմանված կարգով ողոտագործել այդպիսիք: Բացի այդ, տեղական խորհուրդներին իրավունք և վերապահագում, ի հաշիվ սեփական միջոցների և ի հաշիվ փոխառության միջոցների, կազմակեր-

ուել ինչպես արդյունաբերակիսն, նույնպես և գյուղատնտեսական ու կոմմունալ նոր ձեռնարկություններ։ Փոխառության իրավունքը վերապահված և ինքնուրույն բյուջե ունեցող ամեն մի տեսակի խորհուրդի, ըստ վորում փոխառությունները կարող են ինքվել հետեւալ հիմունքներով։ Նրանք պետք եւ ունենան վորոշակի նըպատճեակային ուղղություն (շինարարության կամ ձեռնարկության լայնացման, շինարարության կամ ինակելի տների և առևտրարդյունաբերական շենքերի հիմնական վերանորոգման, վերանորոգման արհեստանոցների կազմակերպման և այլն)։

Փոխառությունը կնքել կամ փոխառությունը ողտադրծել բյուջեյի գեֆիցիաը ծածկելու համար, վոչ մի գեղքում չի թույլատրվում։

Փոխառությունները կարող են լինել յերկարաժեկ ու կարճաժեկ և չեն կարող դերազանցել տվյալ գյուղական բյուջեյի համապատասխան տարվա յեկամտային մասի՝ առաջիները մեկ հինգերորդ և յերկրորդները մեկ տասերորդ մասը։ Որինակ՝ յեթե տվյալ տարում գյուղական բյուջեյի յեկամուտները կազմում են 10000 ռ. սպա փոխառությունը չի կարող դերազանցել՝ յերկարաժեկ՝ 2000 ռ. իսկ կարճաժեկ՝ 1000 ռ.։ Որենքով սահմանված չափերից ավելի վարկեր կարող են ինքվել մերայն Շրջանային Գործադիր Կոմիտեյի թույլտվությամբ։

Գյուղական խորհուրդները պարտավոր են. փոխառությունը կնքելու վերաբերյալ պայմանագրով սահմանված ժամկետներում մարել այդպիսիք և մուծել նույն այդ պայմանագրով պայմանավորված տոկոսները։ Փոխառության պարտքերն իր ժամանակին չմարելու դեպքերում գյուղխորհուրդը պատասխանատու յերաշամքով շեկամուտներով և իր գույքով։ Հվիճարելու գեղքում դանձումը կարող է տարածվել նրանց վրա։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՏՆԱՐԻՒՈԴ ՄԱՐՄԻՆԵՐԸ

Գյուղական բյուջեն անորինում և գյուղխորհուրդը՝ նրա նախադահի և քարտուղարի միջոցով։ Գյուղական բյուջեյի տեխնիկական աշխատանքը կատարում է գյուղ-

խորհուրդին կից պանվող հատուկ ֆինանսական աշխատակիցը:

Բյուջեն կազմելու և կատարելու, ինչպես և գյուղական բյուջենի մերաբներյալ տարգող հաշվեավության և հաշվեաբության բնդհանուր հսկողությունը պատկանում և Երջանային Գործադիր կոմիտեյին, վորոն իրագործում և այլ խնդիրը ըրջանային ֆինբաժնի միջոցով: Այս գյուղինորհուրդների համար, վորոնք միացված են ըրջանային կազմի մեջ չմտնող ինքնուրույն քաղաքներին, պյուղական բյուջեների բոլոր աշխատանքների ընդհանուր զեկավաբությունը իրագործվում և քաղաքորչորդի կողմից, քաղֆինբաժնի միջոցով:

Մենք հետապա տողերում այլևս չենք առաձնայներու քաղաքներին կցված գյուղինորհուրդները և պետք ի իմանալ, վոր այլ վերջինների նկատմամբ, այս գրքում հիշատակվող, ըրջգործկոմին (նրա ըրջֆինբաժնի հետ միասին) փոխարինողը հանդիսանում է քաղխորհուրդը (նրա քաղբաժնի հետ միասին):

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՅՑԻ ԾԱԽՔԵՐԸ

Համաձայն ըրջանային գործկոմների, քաղաքացին և գյուղական խորհուրդների բյուջետային իրավունքների մասին ժամանակավոր կանոնադրության, հաստատված Անդրկովկանայն կառավարության կողմից 1930 թ. նոյեմբերի 12-ին, ըրջանի տերիտորիայի վրա ամեն մի գյուղական բյուջեյում մացվող ծախքերի ցանկը պահանջում է ըրջանային խորհուրդների համադումարի կողմից կստ թե չե ըրջգործկոմի լայնացրած պլենումի կողմից, վորը հետադայում հաստատվում է ըրջանային խորհուրդների համագումարի կողմից: Սակայն ԽՍՀՄ իրավության մեջ գյուղխորհուրդները կազմակերպելու վերաբերյալ՝ «Հիմնական կանոնադրությամբ» նախատեսված են նվազագույն պարտադիր ծախքեր, վորոնք մացվում են ոյցուղական բյուջեյի մեջ: Բացի այլ պարտադիր ծախքերից ըրջանային ըրջգործկոմը կարող է գյուղական բյուջեյին տալ նաև ոյցուղինորհուրդի տերիտորիայի վրա պահպաղ հիմնարկություններին վերաբերող ուրիշ ծախքեր են: Վորպես կանոն, ոյցուղական բյուջեյի մեջ կարող են մացվել միայն այնպիսի ծախքեր, վորոնք նշանակություն ունեն տվյալ գյուղ-

խորհուրդների բնակչության համար։ Խսկ այնպիսի ծախքեր, վորոնք նշանակություն ունեն յերկու, յերեք և ավելի գյուղխորհուրդների համար, պետք և անցնեն շրջանային բյուջեներով։ Այդպես որինակ՝ յեթե գյուղխորհուրդի տերիտորիայի վրա գտնվում և ամբողջ ըլքնանի միակ հիվանդանոցը, վորը սպասարկում և շրջունի վողջ բնակչությանը, կամ որինակ՝ յերկու-յերեք պյուղխորհուրդ սպասարկող կոլյերիտ դպրոցը, ապա այդպիսի հիվանդանոցների կամ դպրոցների ծախքերը պետք ե մտցվեն շրջանային բյուջեյի մեջ։ Բայց կրկնում ենք, շրջանային գործիումը զրկված չե այդպիսի հիվանդանոցի և դպրոցի պահպանումը գյուղական բյուջեյին հանձնելու իրավուքից, իհարկե, այն պայմանով, վոր նու ապահովի գուղխորհուրդը համապատասխան միջոցներով, վորոնք անհրաժեշտ են այդ հիմնարկությունների լրիվ սպասարկման համար։

Գյուղական բյուջեյի վրա գնելու ծախքերի ցանկը մոտավորապես պետք ե ընդգրկի հետեւյալ հոգվածները՝

1) Գյուղական խորհուրդների պահպանումը և խորհուրդների վերընտրության վերաբերյալ կատարվող ծախքերը։

2) Տվյալ գյուղխորհուրդները սպասարկող առաջին աստիճանի դպրոցների և բարձր տիպի դպրոցների, նույն թվում և կոլյերիտ դպրոցների, կազմակերպումը և պահպանումը։

3) Գյուղական դրադարձների, խրճիթ-ընթերցարանների, անդրագիտության վերացման կայանների, քաղդրադիտության դպրոցների, ակումբների, կարմիր անկյունների և այլ գյուղական նշանակություն ունեցող քաղաքական-լրասավորական հիմնարկների կազմակերպումը և պահպանումը։

4) Մանկապարտեզների, հրասարակների և այլ գյուղական նշանակություն ունեցող նախադպրոցական հիմնարկների կազմակերպումը և պահպանումը։

5) Մանկական մասրեների, մշտական և ժամանակա-վոր բուժական և բժշկական կայանների, մանկաբարձու-կան ոգնության, կոնսուլտացիայի, բնչպես և բացուապես կամ գներազանցապես տվյալ գյուղխորհուրդի բնակչության սպասարկող հիվանդանոցների կազմա-կերպումը և պահպանումը։

6) Գյուղական փոխադարձ ոգնության ընկերությունների վարկավորումը, պատերազմի հաշմանդամներին, նրանց ընտանիքներին և պատերազմում մեռածների բնաւանիքներին կենսաթոշակ և նպաստ վճարելը:

7) Հական բղենային պաշտպանությունը և գյուղի բարեկարգությունը:

8) Գյուղատնտեսական գործիքների վերանորոգման համար արհեստանոցների կազմակերպումը և պահպանումը:

9) Վարժայականների, բնակչության կայանների, մերժադրությունների և այլ նման գյուղական նշանակություն ունեցող գյուղատնտեսական ձեռնարկումների կազմակերպումը և պահպանումը:

10) Գյուղական նշանակություն ունեցող ճանապարհների, կամուրջների, գետանցների և այլ ճանապարհային կառուցվածքների շինարարությունը և պահպանումը:

11) Գյուղխորհուրդին տմբացված գույքի շահագործումը (այն ե) բնակելի աների, առևտրա-արդյունաբերական չենքերի, գյուղական նշանակություն ունեցող անտառների, զանազան հողային գույքերի և նույնապես գյուղական նշանակություն ունեցող զանազան տեսակի ձեռնարկությունների (կոմմունալ և արդյունաբերական) շահագործումը:

Բոլոր թված հիմնարկների, ձեռնարկումների, գույքերի և ձեռնարկությունների վերաբերյալ, գյուղխորհուրդը վերցնում է իր վրա հիմնարկությունում և ձեռնարկությունում զբաղված բանվորների և ծառայողների աշխատավարձը վճարելու ծախքերը, այդ հիմնարկների անտեսական պահպանումը, կահավորումը, շահագործման և գործառնական ծախքերը, վերանորոգումը, ինչպես և նոր հիմնարկների, ձեռնարկումների ու ձեռնարկությունների կազմակերպումը (շինարարությունը, սկզբնական կահավորումը):

Բացի վերոհիշյալից, գյուղական բյուջեյով կարող են կատարվել նաև հետեւյալ ծախքերը:

1) Վարկային հիմնարկներում կնքված փոխառությունների և ստացված վարկերի հատուցումները:

2) Գյուղական բյուջեն սիստեմությունը յեկամաւուների վերադարձումը:

3) Գյուղխորհուրդի կողմից կրած զանազան վնասները ծածկելու համար առաջացած ծախքերը և դրամարկային տոկոսները:

4) Շրջանային կարգավորման Փոնդի մասհանումները:

Բացի այդ ծախքերից, «ԱՍՖԽՀ տեղական Փինանսների վերաբերյալ կանոնադրության» 90-րդ հոդ. թույլ է տալիս տեղական խորհուրդներին, նույն թվում գյուղական խորհուրդներին, իրենց բյուջեների ծախքային մասի մեջ մացնել չնախատեսված ծախքերը ծածկելու համար հատկացումները: Այսպես կոչվող չնախատեսված ծախքերի Փոնդի չափը բյուջեյի ընդհանուր գումարի $\frac{3}{10}$ -ից գերազանցել չի կարող:

Այդպես որինակ՝ յիթե գյուղական բյուջեն կազմված է 100.000 ռ. դումարով, ապա չնախատեսված ծախքերի Փոնդը 3000 ռ. ավելի չի կարող լինել: Չնախատեսված ծախքերի համար հատկացված գումարները ծախսելու կարգը «տեղական Փինանսների վերաբերյալ կանոնադրության» 90-րդ հոդ. համաձայն սահմանում են ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների ֆինանսատները: Այդ Փոնդը, վորպես կանոն, կարող է ծրագրել միայն այն կարիքների համար, վորոնք առաջանում են բյուջետային տարրվա մեջ, և վորոնք չելին կարող նախատեսվել պլանով, հետևապես, այնպիսի կարիքների համար, վորոնց նկատմամբ ծախքեր չեն մացված հաստատված գյուղական բյուջեյի մեջ: Նման կարիքներ կարող են տառաջանալ զանազան տարերային աղետների հետևանքով, որինակ՝ հրդեհի, սաստիկ ճյուն զալու, գետի հեղեղումի և այլն: Բացի դրանից, թույլատրվում է այդ Փոնդի միջոցները ծախսել նաև արտադրական կարիքների համար, ինչպես որինակ՝ շինարարության համար լրացուցիչ հատկացումներ անելու, դարձանացանի կամպանիայի համար բաց թողած միջոցների ուժեղացնելու, ինչպես և հեղափոխական տոնական կատարումներ անցկացնելու, զանազան բնույթի մասսայական կամպանիաների համար և այլն:

Չնախատեսված ծախքերի Փոնդը վոչ մի դեպքում չի թույլատրվում ծախսելու վարչական ապարատի պահպանման վրա և այդ ապարատի անտեսական ծախ-

քերը, գործուղումների և այն հիմնարկների պահան-
ձոն ծախքերը ավելացնելու համար, վորոնց վերաբեր-
յալ ծախքերը արգեն մտցված են գյուղական բյուջեն:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՈՒՋԵՅԻ ՑԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՑԵԿԱՄՈՒՏԻՆ ՑԱՆԿԸ

ԽՍՀՄ իության 1930 թ. փետրվարի 3-ի հաստատ-
ված «գյուղխորհուրդները կազմակերպելու վերաբերյալ
Հիմնական կանոնադրությունը» և 1931 թ. գեկտեմբե-
րի 21-ի միութենական որենքը հանրապետական և տե-
ղական բյուջեյի վերաբերյալ՝ գյուղական խորհուրդնե-
րի բյուջեներում մտցնում ե վորոշ յեկամուի աղբյուր-
ներ, վորոնց հիմնական ցանկը բերված ե վերևում՝
գյուղական խորհուրդների բյուջետային և գույքային
իրավունքներին վերաբերյալ:

Այդ ցանկի հիմնան վրա դաշնակից հանրապետու-
թյունները, իսկ ԱՍՖԽՀ Հ-ում Աղբյուրների, Հայաստանի
և Վրաստանի հանրապետությունների կառավարու-
թյունները մշակում են այն նվազագույն յեկամուտների
ցանկը, վորոնք յենթակա յեն անպայման հանձնման՝
գյուղական բյուջեն մտցվող ծախքերը ծածկելու համար:
Այդ ցանկը, Անդրկենտոգործկոմի 1932 թ. մարտի 27-ի
վորոշման հստեմատ, մոռավորապես պետք ե ընդգրկի
հետեւյալ աղբյուրները՝

1) Գյուղխորհուրդին ամբացված բնակելի տների,
առեւտրա-արդյունաբերական չենքերի, չուկաններում ա-
ռեվտրի համար հատկացված տեղերի (կրպակներ, սե-
ղաններ և այլն) և այլ կոմունալ գույքի յեկամուտները:

2) Գյուղական խորհուրդներին հանձնված հողային
դույքերի յեկամուտները:

3) Գյողխորհուրդին ամբացված կամ նրա կողմից
կազմակերպված, գյուղխորհուրդի տեքիտորիայի վրա
դանվող զանազան ձեռնարկությունների յեկամուտները:

4) Գյուղյուջեյով պահվող գյուղատնտեսական
ձեռնարկումների յեկամուտները, ինչպիսին են՝ բեղմնա-
վորման ու վարձակայանների, սերմաղտիչ կայանների և
այլն:

5) Մուտքեր հետեւյալ տեղական հարկերից և տուր-
քերից՝ շենքերից, միանլավ տուրքից, վորտեղ այդպի-
սին դանձվում ե, գյուղկատարածու լինելու իրավուն-



քից զբկված անձերից գանձվող տուրքից և Հողային ոնտայից:

6) Գյուղխորհուրդի տերիտորիայի վրա գանձվող պետական հարկերից գյուղական բյուջեյին լրիվ կամ մասնակի չափով կարող են հանձնվել՝

ա. Մասնանումներ միասնական գյուղատնտեսական հարկից՝ շրջանային խորհուրդների համագումարի կամ շրջործկոմի կողմից վորոշված չափերով, բայց այլալ գյուղխորհուրդի տերիտորիաի վրա մուծված այդ հարկի 50-ի/օ-ից վոչ պակաս.

բ. Պետական արհեստագործական հարկը.

գ. Գյուղխորհուրդի տերիտորիայի վրա գտնվող կոռուպտատիվ կազմակերպություններից գանձվող յեկամատային հարկը.

դ.) Գյուղխորհուրդի տերիտորիայի վրա բնակվող մասնավոր անձերից գանձվող յեկամատային հարկը.

ե. Միասնական պետական տուրքը.

զ. Գերաշահի հարկը.

է. Միասնական ձկնորսային տուրքը.

ը. Ժառանգական կամ պարզեվի կարգով փոխադրվող դույքի հարկը.

ժ. Գյուղխորհուրդի տերիտորիայի վրա իրացված պետական փոխառություններից կատարվող մասնանումները այն չափերով, վորոնք սահմանվում են փոխառությունները բաց թողնելու ժամանակ:

Բացի դրանից, հանրապետական և տեղական բյուջեների վերաբերյալ 1931 թ. նոյեմբերի 21-ի որենքի հիման վրա գյուղական բյուջեն են մտցվում, վերելում մատանանշված հիմունքներով, վարկային հիմնարկներում կնքված փոխառությունները, գյուղխորհուրդի տերիտորիայի վրա մուծված պետապահովադրական վճարների սահմաններն այն չափերով, վոր սահմանվում են շրջանային գործադիր կոմիտեյի կողմից, համապատասխան տարգա սկզբին յեղած բյուջետային միջոցների և ինքնահարկման միջոցների մասցը մասնությունները և տուղանքները, վոր գանձում ե գյուղխորհուրդը այն սահմաններում, վոր վորոշված են ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների որենսգրությամբ: Այնուհետև, ինչպես արդեն մատնանշվել ե վերելում, գյուղական բյուջեն

մացվում են բնակչության ինքնահարկման միջոցները և կոտնտեսությունների միջոցները:

Ինչպես տեսնում ենք բերված ցանկից, գյուղական բյուջեի բոլոր յեկամուտները կարող են մտցվել հետեւյալ խմբակների մեջ՝

1) Գյուղխորհուրդին ամբացված կամ հանձնված բունազան գույքերի յեկամուտները.

2) Տեղական հարկեր և տուրքեր.

3) Գետական հարկեր և յեկամուտներ.

4) Կոլանահետությունների և բնակչության ներդրավված միջոցները:

5) Զանազան յեկամուտներ, վորոնք չեն կարող դառնել նախորդ խմբակներից և վոչ մեկին:

Թված խմբակների համեմատ ել արծարծված են բոլոր գյուղական բյուջեն մտնող յեկամուտները և ցույց ե արված նրանց մուծման կարգը:

Թված յեկամատային աղբյուրներից մեզ հարկավոր ե իանոց առնել միայն նրանց վրա, վորոնք հատուկ ու բնողքական ականերով չեն կարգավորվում:

ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԳՈՒՅՔԵՐԻՑ

Գյուղխորհուրդին ամբացված գույքերը կարող են լինել յերեք կարգի՝ կոմմունալ, արդյունաբերական և գյուղատնտեսական:

Առաջինների թվին են պատկանում տեղական խորհուրդների գույք համարվող բնակելի տները, այսինքն աշխատավորները, վորոնք իր ժամանակին ազգայնացվել են Արդարացյան իշխանության կողմից և հանձնվել են տեղական խորհուրդներին՝ —առելվարա—արդյունաբերական չենքերը, այսպես կոչվող խանութները, պահեստի չենքերը, շուկաներում առելվարուր անելու տեղերը, զանազան տեսակի ոգտակար հանածոները (քարհանքներ, կարյերներ) և այլն: Այսնուհետև այդ գույքի թվին են պատկանում և կոմմունալ ձեռնարկություններ, ինչպիսինք են ջրմուղներ, բաղնիքներ և այլ հասարակական օգտագործման ձեռնարկություններ:

Երկրորդ կարգի գույք պիտի համարվեն՝ աղյուսի և կը գործարանները, ջրաղացները, գյուղատնտեսական մեքենաները վերանորոգելու համար արհեստանոցները և

ուրի; գյուղատնտեսական նշանակություն ունեցող ձեռնարկություններ:

Վերջապես գյուղատնտեսական գույքի թվին են պատճանում դանաղան տեսակի կալվածքներ՝ ինչպիսինք ևն՝ մարզագետիններ, գյուղատնտեսական նշանակություն ունեցող տրոտավայրեր, պաղատու այգիներ և խաղաղանոցներ, բանձարանոցներ, բախչաներ, գյուղի արտաներ և այլն։ Այդ գույքերի թվին պետք է գտնել նաև վերի թվում գյուղատնտեսական նշանակություն ունեցող ձեռնարկությունները (բեզմասվորման վարձակայանները, մերժադրությունները և այլն), վորոնք դեռ կարող են հանձնված։ Բոլոր թված գույքերը կարող են շահագործվել ինչպես արնաւցվարկի փոխադրելու միջոցով, նույնական և անմիջարմար գյուղագործություններին չեն հանձնված։ Յեթե գույքը տնտհաշվարկի փոխադրելը կամ անմիջարմար շահագործելը դժվարություններ և առաջացնում, ապա այդ գույքը կարող է կապարավ արվել զանազան հիմնարկների և կազմակերպությունների։ Այդ գեղքում, գյուղխորհուրդը պայման է կնքում համապատասխան հիմնարկի հետ և պայմանագրավ սահմանված ժամկետներում դանձում նրանից գույքի ողբագործման համար կապարավարձու։

Իսկ յեթե ձեռնարկությունը փոխադրված է տնտհաշվարկի, ապա գյուղբյուջեյի մեջ մտնում և նրա ոգուացայն չափերով, վորը թույլատրված է հասուլ որենքով, և վորը ընդունել է գյուղխորհուրդը այդ ձեռնարկության ֆինանսական պլանը քննելուց և հաստատելուց հետո։

Անմիջարմար գյուղխորհուրդների կողմից շահագործվող ձեռնարկությունները և գույքերը, ինչպես այդցույց և ավել փորձը, ողբագործվում են վոչ միշտ բավականաչափ տնտեսավարքի և լրիվ։

Հարկավոր է առանձնապես ուշադրություն դարձնել դրա վրա և հիշել, վոր ամեն մի թերագանձված ուուրլին ծանրապես պնդագանում է գյուղական բյուջեյի վրա։ Ձեռնարկությունների ավելացրած յեկամուտները հնարավորություն են տալիս ավելացնելու նաև գյուղի տնտեսության առանձին մասերի վրա կատարվող ծախսերի գումարները։

Դրա համար, դույքի անմիջաբար շահգործման
պարմաններում, անհրաժեշտ են նկատի ունենալ, վոր այդ
ձեռնարկությունների արտադրանքը ձրիաբար բաց թող-
նելիր կամ առանց վարձատրության դույքից ոդտվելը
անթույլատրելի յէ: Ձեռնարկությունների կողմից հա-
տու ցած ծառայության ինքարժեքը պետք ե վարձատրվի
ոդազողի կողմից լրիվ չափով: Այդպես որինակ՝ բաղնի-
քից ոգտվելու համար դյուղխորհուրդի կողմից սահման-
ված վարկը պետք ե ծածկի բաղնիքը պահպանելու ինք-
նարժեքը, հաշվելով այդ թվում նաև վերջինի վերանո-
րողումը: Հարկավոր չե թույլ տալ, վոր՝ դյուղխոր-
խորդը իր միջոցների ավելորդ ծախքերը կատարի բաղ-
նիքի պահմանման և վերանորոգման կամ իր մյուս ձեռ-
նարկությունների համար:

Գույքերի և ձեռնարկությունների անմիջաբար շա-
հագործման դեպքում դրանց բոլորի յեկամուտները
լրիվ չափով մասցում են դյուղական բյուջեն, իսկ բյու-
ջելի ծախքային մասում անց ե կացվում նրանց պահ-
մանման, շահագործման վերանորոգման և այլ անհրա-
ժեշտ ծախքերը:

ԶԱՆԱԶԱՆ ՑԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Զանազան յեկամուտների թվից գյուղական բյուջե-
լին են գյուղացվում հետեւյալ յեկամուտները՝ հունվա-
րի 1-ին մնացող բյուջեային միջոցների և ինքնահարկ-
ման միջոցների մնացորդները, բանկերում պահվող դրա-
մական կապիտալների կամ տոկոսաբեր թղթերի (գյուղ-
խորհուրդին պատկանող պետական փոխառությունների
պարտատոմները) տոկոսները, գյուղխորհուրդին պատ-
կանող զանազան անպետք դույքը ռեալիզացիայի յեն-
թարկելուց ստացած յեկամուտները և գյուղխորհուրդի
վորոշումները խախտելու համար դյուղխորհուրդի վս-
րոցած տուղանքները: Բացի այդ, գյուղական բյուջեյին
կորող են մացվել այն հիմնարկությունների յեկամուտ-
ները, վորոնք պահվում են գյուղական բյուջեյով, որի-
նակ՝ բժշկության համար բժշկական հիմնարկներին
արիով վարձատրությունները:

Գյուղական բյուջեն մտնելու համա գյուղխորհու-
րդին են հանձնվում կոլտնտեսությունների միջոցները
այն Փոնդերի, վորոնք նախատեսված են կոլտնտեսու-

թյունները սպասարկող կենցաղային և կուլտուր-լուսավորական հիմնարկները բարելավելու համար, և կոլտնտեսությունների նպատակային հատկացումները զանազան ձեռնարկությունների համար, վորոնք անցնում են գյուղական բյուջեյով: Այդ վերջին հատկացումները հանձնվում են միայն իրենց՝ կոլտնաեսությունների վորոշումների համաձայն:

Այդ յերկու յեկամուտներն ել մտցվում են գյուղական բյուջեյի մեջ և պետք ե ծախսվեն՝ տուաջինը կոլտնտեսությունները սպասարկող կուլտուր-լուսավորական և կենցաղային հիմնարկությունների համար, իսկ յերկրորդն այն ձեռնարկումների վրա, վորի համար, կոլտնտեսության վորոշմամբ, այդ միջոցները հանձնվել են:

Այդպես կոլտնաեսությունը կարող է վորոշել կագմակերպել իր մոտ մանկապարտեղ կամ բաղնիք, ըստ վորում այդ մանկապարտեղը, բաղնիքը սպասարկելու յենուրիչ կոլտնտեսության ևս կամ ուրիշ կոլտնտեսություններ իրենց հերթին կորոշեն նույն ձեռնարկումը իրադրծելու համար իրենց յեկամուտներից մասհանում կատարելու: Այս գեղագում գյուղխորհուրդը ընդունելով իր բյուջեյի վրա կոլտնաեսությունների նպատակային հատկացումները, պարտավոր է գործադրել դրանց ըստ իսկական նշանակության:

Բացի թված այլբյուրներից, բյուջեյի յեկամտային մասը կարող են մտնել փոխառությունների գումարները, վորոնք գյուղխորհուրդը կտուանա, որինակ, կոմմունայ բանկից՝ բաղնիք կառուցելու, ելեկտրոցանցի, գյուղական ջրմուղու և այլ նպատակների համար: Հարկավոր է հիշել, վոր նման փոխառությունները ունեն խիստ նպատակային նշանակություն:

Փոխառություն կնքելու ժամանակ պետք է ղեկավարվել այն կանոններվ, վորոնք սահմանված են «տեղական խորհուրդի գույքային իրավունքների վերաբերյալ կանոնադությամբ» վորը հաստատված է Անդրկովկասյան կառավարության կողմէց 1929 թ. ոգոստոսի 5-ին (բովանդակությունը բերված է վերեվում):

Այնուհետև համամիութենական կառավարության 1931 թ. փետրվարի 1-ի վորոշման համաձայն, խնայողամարկղները կարող են տալ գյուղխորհուրդներին:

յերկարատե վարկեր՝ գյուղական բյուջերով անցնող կուրուր ըստավորական ծախքերը ուժեղացնելու համար: Այդ վարկերը առաջ համար հատկացվում է, համապատասխան գյուղխորհրդի խնայդրամարկղի ավանդների տարի, 15 0/0-ը, ըստ վորում վարկի բացարձակ չափը կախված կլինի ավանդների ներդրաման վերաբերյալ կենտրոնի կողմից տրված կոնտրոլ առաջադրանքները գյուղխորհրդի կողմից հաջողությամբ կատարելուց:

Այսպիսով, վարկ ստանալու համար գյուղխորշուրգը պետք է տանի հատուկ կամպանիա՝ բնակչության միջոցները խնայդրամարկղ ներդրամակելու ուղղությամբ, և վորքան հաջողությամբ կատարվի այդ աշխատանքը, այնքան ավելի շատ կլինի ստացվող վարկի չափը: Վերջինը տրվում է 5 տարի ժամանակով, և ամեն 100 ոուր: Համար գյուղխորհուրդը տարեկան պետք է վճարի 9 ոուրլի տոկոս: Վարկ ստանալու համար գյուղխորհուրդը պայմանագիրը է կնքում խնայդրամարկղի հետ, վորի մեջ պետք է մատնանշված լինի վարկի չափը, նպատակը, վորի համար զործադրվելու յե վարկը, և վարկի ժամկետը: Պայմանագրով սահմանվում է գյուղխորհրդի պարտականությունը՝ նշանակված ժամկետին վարկը մարելու, ժամանակին տոկոսները վճարելու և ամեն կերպ աջակցելու գյուղխորհրդի տերիտորիայի վրա խնայդրեցը զարգացնելու վերաբերյալ: Խնայդրամարկղներում կան տիպական պայմանագրեր, վոր լրացվում են վարկը տալու ժամանակ և ստորագրվում են խնայդրամարկղի և գյուղխորհրդի նախագահի կողմից:

Ապահովագրական վճարներից տեղական բյուջեյի ոգտին կատարվող մասհանումները սահմանված են 1931 թ. գեկտեմբերի 21-ի միութենական որենքով: Այդ մասհանումների մի մասը կարող է հանձնվել գյուղական բյուջեին, ըստ վորում հանձնելու վերաբերյալ հարցը լուծում է շրջանային ֆործկոմը, վորը սահմանում է հանձնվող մասի չափը և հանձնելու կարգը: Այդ մասհանումներն ունեն նպատակային նշանակություն և կարող են ծախսվել միայն հրդեհի դեմ պայքարելու համար:

Այն դեպքերում, յերբ գյուղական բյուջեյին հանձնոված վերեվ թված յեկամուտները բավական չեն նրա վրա դրված ծախսերը ծածկելու համար, շրջանային զործկոմք իր արտօմազրության տակ յեղած կարգավորման ֆոնդից գյուղական բյուջեյին տալիս և նպաստ:

Երջանային կարգավորման ֆոնդի նպաստները կուրող են լինել յերկու կարգի՝ նպատակային նշանակությամբ և ընդհանրապես գյուղական բյուջեյի միջոցները ուժեղացնելու համար: Առաջին դեպքում շրջանային Գործադիր կոմիտեն ուղղակի ցույց է տալիս, թե ի՞նչի համար և նա տայիս նպաստ, որինակ՝ դպրոցների շինարարության համար կամ գյուղական հիվանդանոցի կոռուցումն ավարտելու և հիմնարկները բարելավելու համար և կոլտնտեսությունների նպատակային հատկացումները զանազան ձեռնարկումների համար, վորոնք անցնում են գյուղական բյուջեյով: Այդ վերջին հատկացումները հանձնվում են միայն իրենց՝ կոլտնտեսությունների վորոշումների համաձայն:

Այդ յերկու յեկամուտներն ել մտցվում են գյուղական բյուջեյի մեջ և պետք է ծախսվեն՝ առաջինը կուտնտեսություններն սպասարկող կուլտուրա-լուսավորական և կենցաղային հիմնարկությունների համար, իսկ յերկրորդն այն ձեռնարկումների վրա, վորի համար կոլտնտեսության վորոշմամբ այդ միջոցները հանձնվել են: Այդպես կոլտնտեսությունը կարող է վորոշել կազմակերպել իր մոտ մանկապարտեզ կամ բաղնիք, ըստ վորում այդ մանկապարտեզը կամ բաղնիքը սպասարկելու յեռքից կոլտնտեսության ևս կամ ուրիշ կուտնտեսություններ, վորոնք իրենց հերթին կորոշեն, նույն ձեռնարկումն իրագործելու համար, իրենց յեկամուտներից մասհանում կատարելու: Այս դեպքում գյուղխորհուրդն ընդունելով իր բյուջեյի վրա կոլտնտեսությունների նպատակային հատկացումները, պարտավոր է գործադրել դրանց ըստ իսկական նշանակության:

Բացի թված աղբյուրներից, բյուջեյի յեկամտային մասը կարող են մտնել փոխարությունների գումարները, վորոնք գյուղխորհուրդը կատարած, որինակ, կոմմունալ բանկից՝ բաղնիքը կառուցելու, ելեկտրոցանցի,

գյուղական ջրմուղու և այլ նպատակների համար։ Հայք-
կավոր և հիշել, վոր նման փոխառություններն ունեն
խիստ նպատակային նշանակություն։

Փոխառություն կնքնելու ժամանակաշրջեր և դեկա-
վարվել այն կանոններով, վորոնք սահմանված են «տե-
ղական խորհրդի գույքային իրավունքների վերաբերյալ
կանոնադրությամբ», վորը հաստատված և Անդրկով-
կայան կառավարության կողմից 1929 թ. ողոստուի
նին (բավերակությունը բերված է վերեվում)։

Այնուհետև համամիութենական կառավարության
1931 թ. փետրվարի 1-ի վորոշման համաձայն, ինայ-
դրամարկղները կարող են աալ գյուղխորհուրդներին
յերկարատե վարկեր՝ գյուղական բյուջեներով անցնող
կուլտուր լուսավորական ծախքերը ուժեղացնելու հա-
մար։ Այդ վարկերը տալու համար հատկացվում է, հա-
մարդատասխան գյուղխորհրդի ինայդրամարկղի ա-
վանդների աճի, 15 0/0-ը, ըստ վորում վարկի բացարձակ
չափը կախված կլինի ավանդների ներգրավման վերա-
բերյալ կենտրոնի կողմից տրված կոնտրոլ առաջա-
դրանքները գյուղխորհրդի կողմից վարելու համար,
հանբային կրթություն անցկացնելու համար և այլն։
Նպատակային նպաստներ տալու ժամանակ չըջանային
ֆործեօմը կարող է զնել վորոշակի պայմաններ, որի-
նակ՝ դպրոցները կառուցելու համար, ինքնահարկման
կարգով-բնակչության մեջ հավաքվի նպաստին հավա-
սար գումար։ Այդ դեպքում գյուղխորհուրդը պարտավոր
է զրված պայմանները կատարելու։ Նպատակային նշա-
նակություն ունեցող ստացած նպաստը գյուղխորհուրդը
իրավունք չունի ծախսելու վորեն այլ նպատակի հա-
մար։

Ուրիշ դեպքերում նպաստները տրվում են առանց
վորոշ նպատակի և մտնում են գյուղական բյուջեյի
դրամարկղն ու կարող են ծախսվել ընդհանուր կարգով։

Շըջանային կարգավորման ֆոնդը կարող է գոյանալ
չըջանի տերիտորիայի վրա պետական հարկերի և յեկա-
մուտների մուտքերից, բացառությամբ միասնական
գյուղատնտեսական հարկի այն մասից, վորն անմիջա-
բար փոխանցվում է գյուղական բյուջեյի հաշվին։ Շըջա-
նային բյուջեն մտնող այդ հարկի մնացած մասից, այդ
հարկի որենքի համաձայն, չըջանային կարգավորման

Փոնդի ոգտին անպայման հատկացվում և մի վորոշ մասը:Այդ վերջինի չափը սահմանում էն ԱՄՖՆՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների կառավարություններ:

Կարգավորման ֆոնդը գտնվում է շրջանային Գործկոմի տրամադրության տակ՝ հատկապես տվյալ շրջանի տերիտորիայի վրա գտնվող սակավագոր բյուջեներին նպաստներ տալու համար:

Կարգավորման ֆոնդից տրվող նպաստի չափի մասին շրջգործկոմը պետք է հայտնի համապատասխան գյուղխորհրդին՝ նոր տարվա սկզբից չորս ամիս առանջ:

ԻՆՔՆԱՇԱՐՄՈՒԽՄԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

ԽՍՀ Միության տերիտորիայի վրա գյուղական խորհուրդները կազմակերպելու վերաբերյալ «Հիմնական կանոնների» համաձայն, վոր հաստատված և միութենական կենտրոնաց կողմից 1930 թ. գետրվարի 3-ին, այն միջոցները, վորոնք հավաքվում են ընտակչության ինքնահարկման կարգով, ամբողջությամբ մտցվում են գյուղական բյուջեն: Բայց այդ միջոցները գյուղխորհուրդների կողմից կարող են ծախսվել միայն այն կարիքների համար, վորոնք նշանակված են տվյալ գյուղի քաղաքացիների ընդհանուր ժողովների վորոշումներով: Գյուղխորհուրդը իր հայեցողությամբ վոչ մի այլ նպատակի համար, ինքնահարկման միջոցները ծախսել չի կարող:

Ինքնահարկումը թույլ է տրվում միայն տվյալ դյուղի կուլտուրական և տնտեսական կարիքները բավարարելու համար կամ մի քանի գյուղերի այդ ընդհանուր կարիքների համար: Ինքնահարկման միջոցների հաշվին ծածկել վարչական ծախսերը, այն եւ գյուղխորհրդի կամ տեղական իշխանության մարմինների աշխատավարձը, նրանց համար շենքեր կահավորելու կամ պահպանելու ծախսերը կամ նրանց այլ ծախսերը, որենքով արգելվում են:

Այն կարիքների թվին, վորոնց համար կարող են անցկացվել ինքնահարկումը, դասվում են.

1) Կուլտուր-կրթական և առողջապահական հիմնարկությունների (գպրոցներ, գրադարաններ, խրճիթներցարաններ, ակումբներ, կարմիր անկյուններ,

մանկապարտեղներ, մանկական մսուըներ, հիվանդանոցներ, բժշկական և բուժական կայաններ և այլն) կազմակերպումն և անտեսական պահպանումը (նոր շինարարություն, կիսապարտ շնչքերը վերջացնելու, հինը լայնացնելու, հիմնական և ընթացիկ վերանորգում կատարելու, շնչքեր վարձելու, կահավորելու յիռացման համար և այլն):

2) Գյուղատնտեսությունը բարձրացնելու նպատակ ունեցող հիմնարկությունների (գյուղատնտեսական, անառնարութական, բնօգնավորման և վարձակայաններ, սերմարտիչ կայաններ, հացապաշարային խանութներ և այլն) կառուցումն և անտեսական պահպանումը:

3) Ճանապարհային շինարարությունը—գյուղական նշանակություն ունեցող ճանապարհների, կամուրջների, դետանցների և ճանապարհային այլ կառուցվածքների շինարարությունը, պահապանումն ու վերանորոգումը:

4) Հակահրդեհային պահպանությունը—հրդեհային գոմերի շինարարությունը, կահավորումը, պահպանումը և սպասարկումը:

5) Գյուղի բարեկարգությունը—հասարակական բաղնիքների, ջրմուղների, աղբյուրների, քայլեզների և այլաց պահպանումը և նորգումը:

6) Գյուղի ելեկտրիֆիկացիան գործող ելեկտրոկայաններին կցելու միջոցով, ինչպես և գոյություն ունեցող ելեկտրոցանցի վերանորոգումը:

7) Գյուղի պահպանությունը (պահակների պահպանումը):

Բերած ցանկը ընդգրկում է գյուղի բոլոր ամենադրվագոր կուլտուրական և տնտեսական կարիքները, բայց որենքը, հաշվի առնելով առանձին շրջանների առանձնահատուկ կենցաղային հնարավորությունները, իրավունք է վերապահում համապատասխան մարմիններին (շրջանային գործկոմներին) բերած ցանկի մեջ փոփոխություններ և ուղղումներ մտցնելու այն պայմանով սակայն, վոր ինքնահարկման միջոցները գյուղի կռւլտուրական և տնտեսական կարիքներին հատկացնելու հիմնական սկզբանքը չխախտվի: Բոլոր փոփոխությունները, վոր մացլում են ցանկի մեջ, պետք է հայտնվեն աեղերին մինչև ինքնահարկման կամպանիայի սկզբը:

Ինքնահարկումն անցկացնելու, նրա չափերի հարցե-

բը և այն մասին, թե ի՞նչ կարիքի համար վորքան գումար և հասակացվելու, վորոշվում են քաղաքացիների ընդհանուր ժողովում, վորը հրավիրում է գյուղխորհուրդների իր հախտածեռնությամբ կամ, ինչպես հասարակական կազմակերպությունների, նույնպես և քաղաքացիների առանձին խմբերի կամ առանձին քաղաքացիների հայաբարությունների համաձայն: Ինքնահարկման հարցը քողաքացիների ընդհանուր ժողովի քննությանը ներկացնելուց առաջ, գյուղխորհուրդը պարտավոր և չքուվորության, բատրակների, գյուղակիցությամբ նշել այն կարիքները, վորոնք պետք և բավարարվեն ի հաշիվ ինքնահարկման միջոցների և միաժամանակ կազմել անհրաժեշտ ծախսերի մոտավոր նախահաշիվը:

Քաղաքացիների ընդհանուր ժողովի վորոշումից հետո, ինքնահարկումը անցկացնելու և ինքնահարկման կարգով հավաքված բոլոր միջոցները տնօրինելու իրավունքը պատկանում է գյուղխորհուրդին, վորը անց և կացնում ինքնահարկման բաշխումն առանձին քաղաքացիների մեջ, նրա դանձումը և միջոցների հաշվառումն ու վարում և այդ միջոցների հաշվապահությունը: Նրա վրա ել դրվում է ինքնահարկված գումարների պահպանումը և ծախսումը:

Ինչ վերաբերում է գյուղական բյուջեյի և ինքնահարկման միջոցների միջև յեղած փոխհարաբերության հարցին, ապա անհրաժեշտ և նախ և առաջ հաշվի առնել, վոր այդ դումարները գյուղական բյուջեյի մեջ մտցնելը դնում և հետեւյալ նպատակները, —առաջինը՝ կապակցել գյուղական բյուջեյի ծախքերը ինքնահարկման կարգով կատարվող ծախքերի հետ, յերկրորդը՝ կարգավորել ինքնահարկման միջոցների ոգտագործման հարցը:

Ինքնահարկման միջոցները գյուղական բյուջեները մտցնելու հետեւվանքով վոչ մի գեպքում չի կարելի պակասեցնել գյուղի կուլտուրական և տնտեսական կարիքների համար բյուջեյով կատարվող հատկացումները: Ինքնահարկման միջոցներն ոգտագործելու հարցն ունի հսկույթական նշանակություն և հենց այդ պատճառով այդ միջոցները պետք և ծախսվեն միայն այն նպատակների համար, վորոնք մատնանշված են քաղաքացիների ընդհանուր ժողովների վորոշումներով:

Գյուղական բյուջեյով կատարվող ծախսերը ինք-

նահարկման կարգով կատարվող ծախսերի հետ կապելու համար նախ և առաջ անհրաժեշտ են վորպեսզի գյուղական բյուջեները կազմելու պահին ավարտված լինի ինքնահարկման վերաբերյալ անցակցվող կապմանին: Ինչպես հայտնի յէ, որենքն իրավունք և վերապահում դյուլական խորհրդին գյուղի չքավորության, բատրակության և գյուղի ակտիվի հետ միասին քննարկել ինքնահարկման պլանը և այդ պլանի նախագիծը քաղաքացիների ընդհանուր ժողովին ի հաստատություն ներկոյցնել: Այդ պլանն իրագործելու կարգով դյուղխորհուրդը պետք է կապակցի ինքնահարկման անցկացման և ինքնահարկման միջոցների ծավածման պլանը արագագրական պլանի հետ, վորը գրիում և նրա կողմից դյուղական բյուջեն կազմելու հիմունքում:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՅՈՒՁԵՅԻ ԿՈՆՏՐՈԼ ԹՎԵՐԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՅՈՒՁԵՅԻ ԿԱԶՄԵԼԸ

Խորհրդային Միության մեջ ամրագի տնտեսությունը վարվում և վորոշակի, նախապես կազմած պլանով: Այդ պլանով նախատեսվում ե տեղական տնտեսության զարգացումը, նախապես նախագծվում ե թե վորտեղ են կառուցվելու արդյունաբերական և կոմմունալ ձեռնարկությունները, գպրոցական և հիվանդանոցային շենքերը, իրագործվելու բնակաբանային շինարարությունը, վորագործությունը և գյուղական գուգանքների համար պետք է բացիկն գպրոցներ, կազմակերպվեն բժշկական հիմնարկներ, գյուղատնտեսական և անասնաբուժական կայաններ և այլ հիմնարկություններ: Դրան զուգընթաց պլանը նախագծում ե, թե վորոշ ժամանակաշրջանում արդյունաբերությունը ինչ արտադրանք և բաց թողնելու, ինչքան յերեխաններ են ներգրավվելու գպրոցները և նախագրոցային հիմնարկները, քանի մահճակալով են ծավալվելու հիվանդանոցները: Պլանում տրվում են նախագծեր և տեղական տնտեսության ու սոցիալ կուլտուրական շինարարության զարգացման մյուս բոլոր ցուցանիշների վերաբերյալ տեղերում:

Նշելով շինարարական որյեկտները և ժողանատեսության ու սոցիալ կուլտուրական շինարարության ցուցանիշները, ընդհանուր պլանը նախագծում ե և բոլոր պլանային կարգով իրագործվող ձեռնարկությունների, հիմ-

նարկությունների ու ձեռնարկումների շինարարության պահպանման և Փինանսավորման մոտավոր արժեքը: Պլանը տրվում է դրամական արտահայտությամբ:

Ժողովրդական տնտեսության և սոցիալ-կուլտուրական շինարարության պլանը, նայած թե վոր ժամանակամիջոցի համար և նա կազմվում, կարող և լինել, 1) գլխավոր (գեներալնայի), վոր կազմվում և յերկար ժամանակամիջոցի համար, 2) հնդամյա, 3) տարեկան (այլ կերպ կը նորությունների), վոր կազմվում և մեկ տարվա համար և 4) յեռամյա:

Ժողովրդական տնտեսության զարգացման վերաբերյալ այդ պլանները, վերադաս մարմինների կողմից հաստատվելուց հետո, դառնում են դիրքեկտիվային՝ բոլոր գերատեսչությունների և տեղական խորհուրդների համար:

Ամեն տարվա համար կազմվող կոնտրոլ թվերը հասցվում են մինչև շրջան, և շրջգործկոմը պարտավոր է նրա տված թվերը բաշխելու շրջանի տերրիտորիայի վրա գործող առանձին բյուջեների միջև (դյուզական, քաղաքային և շրջանային) :

Շրջանի տերրիտորիայի վրա ձեռնարկությունների և հիմնարկությունների զարգացման արտադրական պլանին զուգընթաց, շրջգործկոմը պետք է նմանապես փորոշե շրջանի առանձին բյուջեների ծավալը: Դրա համար նա բաշխում է ծախսերը շրջանում գործող բոլոր բյուջեների միջև և, դրա հետ միասին, պարզում է առանձին բյուջեների յեկամտային հնարավորությունները, սահմանելով ամեն մի բյուջեյի համար պետական հարկերից և յեկամուտներից կատարվող մասհանման տոկոսը, կազմելով շրջանի տերրիտորիայի վրա անցկացվող տեղական հարկերի և տուրքերի ցանկը և սահմանելով նրանց դրույքները, ինչպես նաև սահմանելով շրջանային կարգավորման ֆոնդից ամեն մի բյուջեյին տրվող նպաստի չափը:

Այդ ձեվով ստացվում են առաջիկա տարվա դյուզական բյուջեյի կոնտրոլ թվերը: Այդ կոնտրոլ թվերը կազմվում են ըստ տնտեսության ճյուղերի և սոցիալ-կուլտուրական շինարարության, առանց այն մանրամասնությունների, վոր կատարվում են դյուզական բյուջեն կազմելու ժամանակ:

Կոնստրուլ թվերը հանդիսանում են պարտագիր գյուղ-
խորհրդի համար, և վերջինս այդ թվերի սահմաններում
կազմում ե իր բյուջեն:

Բացի կոնստրուլ թվերից՝ Աղբբեջանի, Հայաստանի
և Վրաստանի կառավարությունները տալիս են ընդհա-
նուր դիրքեկտիվներ այն մասին, թե ինչպես պետք ե կազ-
մեն տեղական խորհուրդները իրենց բյուջեն, տնտեսու-
թյան վոր ճյուղի վրա յե հարկավոր առաջին հերթին
ուղղել տեղական բյուջենի միջոցները և ինչպես պետք ե
բաշխի առաջիկա տարում այդ միջոցների աճած գու-
մարը:

Այդ դիրքեկտիվների հիման վրա Փինժողկոմատները
տալիս են շրջֆինրաժիններին հրահանգ բյուջեն կազմե-
լու վերաբերյալ և կցում են հրահանդին բյուջետային
կլասիֆիկացիան (նախահաշվային ցանկը), հայտնում են
իրենց կողմից սահմանված ծախսերի նորմաները, ինչ-
պես ըստ առանձին հողվածների (աշխատավարձի, վար-
չտանտեսական ծախսերի, դործառնական ծախսերի,
դույրի գնման և այլոց վերաբերյալ), նույնակես և ամ-
բողջությամբ ըստ բյուջետային միավորների (դպրո-
ցում խմբեր, հիմնադրանոցում մահճակալներ, մի ծառա-
յուղ վարչական հիմնարկություններում, գյուղատնտե-
սական մասը և այլն), մատակարարում են տեղական
մարմիններին սահմանված բյուջետային քարտե-
րով և բյուջեն կազմելու համար այլ անհրաժեշտ նյու-
թերով:

Ռւղարկելով դյուղխորհուրդներին այդ նյութերը,
շրջանային Փինրաժինը հայտնում է նրանց, շրջգործկո-
մի կողմից հաստատված տվյալ դույրի բյուջեյի վրա
դրված ծախսերի վերջնական ցանկը, միասնական գյու-
ղատնտեսական հարկից և ուրիշ պետական հարկերից ու
տուրքերից կատարվող մասհանման տոկոսները, տվյալ
գյուղխորհուրդի համար սահմանված տեղական հարկերը
և տուրքերը և դրանց դրույժները, ինչպես և առաջիկա
տարվա համար շրջանային կարգավորման փոնդից տվյալ
գյուղխորհուրդին արվող նպաստի չափը:

Բայց շրջանային Փինրաժինը չի կարող սահմանա-
փակել հրահանդինների և նյութերի առաքմամբ: Նա
պետք է չարունակի կենդանի կապ պահպանել գյուղխոր-

Հըրդի հետև և անմիջարար զեկավարի գյուղական բյուջեն կաղմելու գործը:

ԲՅՈՒՋԵՏԱՑԻՆ ԿԼԱՍՖԻԿԱՑԻԱ.

(Նախահաշվային ցանկ)

Զեռնամուխ լինելով բյուջեներ կազմելուն; գյուղական բյուջեր նախ և աստղ պետք է իմանա, վոր բյուջեն կաղմվում և մի տարի ժամանակով՝ ոկտոն հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը, այն վորոշակի բյուջետային կլասիֆիկացիայի (նախահաշվային ցանկը) համաձայն, վորը մշակում է հաստատում և միութենական Փինժողկոմատը:

Բյուջետային կլասիֆիկացիան հանդիսանում է բյուջեյի այնպիսի մի ձեվ, վորը յեկամուտներն ու ծախքերը խմբավորում են ճյուղային (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, կոմմունալ տնտեսություն, ժողովրդական լուսավորություն, առողջապահություն և այլն) և առարկայական կարգով:

Բյուջետային կլասիֆիկացիան միատեսակ է ամբողջ ԱՄՀՄիության համար և բացի միութենական Փինժողկոմատից վոչ վոքի կողմից փոխվել չի կարող: Յեթե տեղերում անհրաժեշտություն է զգացվում՝ նոմենակլատուրայի փոփոխման կամ լրացման համար, ապա այդ հարցը հարուցվում է ԱՄՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների Փինժողկոմատների միջոցով: Նախահաշվային նոմենակլատուրայի միասնականությունն անհրաժեշտ է ամբողջ միության տերրիտորիայի վրա յեղած բոլոր տեղական բյուջեները հաշվի առնելու միակերպության համար:

Նախահաշվային նոմենակլատուրայի, ինչպես յեկամըտային, նույնպես և ծախքային մասերը բաժանվում են հատվածների, պարագրաֆների և հոգվածների: Հատվածները միացնում են տնտեսության կամ սոցիալ-կուլտուրական ձեռնարկումների մի ամբողջ ճյուղ, որինական կոմմունալ տնտեսություն, ժողովրդական լուսավորություն, հաղորդակցության ճանապարհները, կամ հաշվի յեն առնում յեկամուտների միատեսակ խումբը (տեղական հարկերը և առողքերը, պետական հարկերից կատարվող մասնանումները, տեղական արդյունաբերության յեկամուտները և այլն):

ՆԱԽԲԱՅԻՆ ԿԱՍՏԻՖԻԿԱՑԻԱՆ

(Սնվանակարգ)

1932 թ. բյուջեային կլասիֆիկացիան ըոլոր ծախ-
քերը բաժանում և հետեւալ հատվածների՝

Հատված 1-ին—Արդյունաբերություն:

» 2-րդ—Գյուղատնտեսություն:

» 3-րդ—Կոմունալ և բնակարային տնտեսու-
թյուն:

» 4-րդ—Առևվտուր, մատակարարում, ու-
տեսահեղինի արդյունաբերություն, կոռուկ-
րացիա:

» 5-րդ—Ծրանապորտ (Ճանապարհային
տնտեսություն):

» 6-րդ—Կատ:

» 7-րդ—ԽՍՀՄ. միասնական ջրային և հիդ-
ըներեւութիւնական ծառայություն:

» 8-րդ—Լուսավորություն:

» 9-րդ—Առաջնուպահություն:

» 10-րդ—Ֆիզիկական կուլտուրա:

» 11-րդ—Աշխատանքի կազմակերպում և
պահպանում և աշխատավորների սոցիալա-
կան ապահովագրություն:

» 12-րդ—ԲԳԿԲ. մասերի և հիմնարկների
տնտեսական ծախքերին մասնակցու-
թյուն:

» 13-րդ—Ընդհանուր վարչություն:

» 14-րդ—Դատական հիմնարկություններ:

» 15-րդ—Պահաստի և ռեզերվի ֆոնդեր:

» 16-րդ—Փոխառության ծախքեր:

» 17-րդ—Զանազան ծախքեր:

» 18-րդ—Սոցապահովագրություն մարմին-
ներին հանձնվող միջոցներ:

» 19-րդ—Ինքնավար Ս.Խ. Հանրապետու-
թյունների տնօպական բյուջեներին հատ-
կացվող միջոցներ:

» 20-րդ—Կարգավորման ֆոնդեր:

» 21-րդ—Ինքնահարկման միջոցների հաշվին
կատարվող ծախքեր:

Հատվածները բաժանվում են պարզբաժների, վո-
րոնք միավորում են միանման հիմնարկություններ կամ

ձեռնարկումներ, որինակ՝ ժողովրդական լուսավորության գծով 1-ին աստիճանի դպրոցները, կոյլերիս դպրոցները, խրճիթ-բներցարանները և այլն։ Առողջապահության գծով հիվանդանոցները, բժշկակայանները և այլն։ Կոմմունայ անտեսության գծով բնակելիք, բարեկարգությունը, հրդեհային պաշտպանությունը, ջրմուղներ և այլն։

Կյասիֆիկացիայի ծախքի մասի պարագագները բաժանվում են հոգվածների, վորոնք ցույց են տալիս, թե պարագրաֆով անցկացվող ծախքը ինչ նպատակի համար և նշանակված։ 1932 թ. կյասիֆիկացիայով ընդամենքը սահմանված և 11 հոգված, այն ե՝

Հոգված 1. Աշխատավարձ :

- » 2. Վարչատաեսական ծախքեր :
- » 2. Նոր շինարարություն և շենքերի սկզբնական կահավորում :
- » 4. Հիմնական վերանորոգում և շենքերի լրացուցիչ կահավորում :
- » 5. Գույքի ձեռք բերում :
- » 6. Հատուկ գործառնական (շահագործման) ծախքեր :
- » 7. Սովորողների նյութական ապահովում :
- » 8. Կապիտալ ներդումներ :
- » 9. Բնակարանային և կենցաղային շինարարություն :
- » 10. Սոցիալական և կուլտուրական շինարարություն :
- » 11. Շրջանառու միջոցների կազմակերպում և ուժեղացում :

Թված հոգվածների միայն առաջին վեցն են, վորկրկնվում են բոլոր հոգվածներում և պարագրաֆներում, այնինչ 7-րդ հոգվածը (սովորողների նյութական ապահովումը) հարկավոր և միայն «ժողովրդական կրթության» հատվածի համար, իսկ հետեւալ չորս հոգվածները—տնտեսավարական ձևանարկությունների համար։

Առողջին հոգվածների համեմատ ծախսերի ճիշտ հաշվառումը կանխորոշում է և նախահաշիվները տեխնիկապես ճիշտ կազմելու խնդիրը և նրանց կատարումը, այդ պատճառով ել առաջին 7 հիմնական հոգվածների վրա անհրաժեշտ և կանգ տանել մանրամասնորեն։

1-ին հոգվածով (աշխատավարձ) հաշվի յեն առնվազաւ բյուջենելով պահվող հիմնարկների կողմէց բանվորներին և ծառայողներին արփող աշխատավարձը, ինչպես և անդկամը պահպանելու համար կատարվող մասհանումները: Այդ հոգվածով չեն անցկացվում բյուջենելով սուհավող ձեռնարկությունների (աղյուսի գործարաններ, ջրաղացներ, բաղնիքներ և այլն) բանվորներին և ծառայողներին արփող աշխատավարձի ծախսերը, նոր շինարարությունների վրա աշխատող և հիմնական վերանորոգումների կատարելու համար վարձված բանվորներին և անհնիկական պերսոնալին տրվող աշխատավարձը:

Այդ հոգվածով հաշվի չեն առնվում նմանապես սոցիալական ապահովագրման համար կատարվող մասհանումները և բանվորական բնակչինարարության կարիքների վրա կատարվող նպատակային հավելումները:

2-րդ հոգվածով (վարչատնտեսական ծախսեր) անցեն կացվում՝ 1) գրասենյակային և փոստ-հեռագրական ծախսերը, 2) անտեսական ծախսերը, 3) գործուղումների ծախսերը 4) խորհուրդների համագումարների գումարման ծախսերը և 5) արանսպորտի (ավտո, ձի և այլն) պահպանման (բայցի աշխատավարձից) ծախսերը, բացառյալ հրդեհային տրանսպորտից, վորի վրա կտարարվող ծախսերը անց են կացվում 6-րդ հոգվածով,

Այս հոգվածի համեմատ ծախսերի առանձին խմբերի մանրակիրկիտացումը (զետալիգացիա) կտրվի ներքեւ, անհատական նախահաշվիների քննարկման ժամանակի:

3-րդ հոգվածով (նոր շինարարություն և շենքերի սկզբնական կահավորումը) անց են կացվում շենքերի և ձեռնարկությունների շինարարության, նույն թվում և նրանց լայնացման համար կատարվող ծախքերը: Շենքերի կահավորման ծախսերի տակ հասկացվում են նրանց մեջ վասարաններ կառուցելը, լուսավորություն անցկացնելը, հեռախոս սարքելը, ջրամատակարարումը և այլն, իսկ արտադրական ձեռնարկությունների համար նշանակված շենքերի մեջ-մեքենաների, դաշդյահների, գործիքների սարքավորումը և բնդհանրապես այնպիսի, մշտական բնույթ կրող հարժարեցումների համար, առանց վո-

ըի կառուցվածքը իր նշանակությանը չի համապատասխանում:

4-րդ հոդվածով (հիմնական վերանորոգում և շենքերի լրացուցիչ կահավորում անց են կացվում ելի նույն ծախսերը, ինչ վոր 3-րդ հոդվածով, այն առարքերությամբ սակայն, վոր այդ ծախսերը վերաբերում են արդեն դոյցություն ունեցող շենքերին, ձեռնարկություններին և այլ շենարարություններին:

5-րդ հոդվածով (դույքի ձեռք բերումը) անց են կացվում այն ծախսերը, վոր կատարվում են ձեռք բերելու հետևյալ դույքերը՝ 1) կենդանի դույք (ձիեր, յեղներ, կովեր, եղեր և այլն), 2) մեղյալ դույք (սեղաններ, աթոռներ, մահճակալներ, սալլեր, կառքեր, ավտոմեքենաներ և այլն), 3) հաղուստեղեն, կոչկեղեն, սպիտակեղեն և մասնագիտական հաղուստ, 4) ձիու սարքավորում (թամբեր, սանձեր, խամուտներ և այլն) և զինավորում (և 5) խրճիթ-ընթերցարանների և գրադարանների համար դրքեր:

Այդ հոդվածով չեն անցնում կենդանի գույքի պահպանման համար կատարվող ծախքերը, վորոնք պետք են անցնեն 2-րդ հոդվածով:

Հաղուստեղեն, կոչկեղեն, սպիտակեղեն և մասնագուստ ձեռք բերելու ծախսերն այս հոդվածով չեն անցնում միայն այն դեպքում, յերբ այդպիսիք հիմնարկության դույքացուցակի մեջ չեն անցկացվում և արգում են ունիերադարձ ոգտագործության համար: Այդպես որինակ՝ սովորողներին արվելու համար ձեռք բերվող հագուստեղենները կոչկեղենները անց են կացվում 7-րդ հոդվածով (սովորողների նյութական ապահովում), իսկ ուրիշ դեպքերում՝ 2-րդ հոդվածով (վարչատնտեսական ծախսերը):

6-րդ հոդվածով, վոր նախատեսում են հատուկ գործառնական (շահագործման) ծախքեր, անց են կացվում տվյալ հիմնարկության համար հատուկ բնույթի կրող ծախսեր, այն եւ՝ 1) պարենավորման ծախսերը, այսինքն մանկատներում մանուկների սնունդը, հիվանդանոցներում հիվանդների և այլն; 2) Դեղօրայք և վիրարութական նյութեր ձեռք բերելու համար ծախսերը, վոր կատարվում են հիվանդանոցների, բժշկակայանների և այլ բժշկական հիմնարկների համար. 3) կուլտ-կրթական-

բնույթի ծախքերը, որինակ՝ գտախոսությունների, զրույցների կազմակերպում և այլն, 4) այլ գործառնական ծախքեր, վոր բղիսում են տվյալ հիմնարկի ուղերամիջ գործունեյությունից:

Բացի այդ, այս հոգվածով անց են էացվում բյուջեով պահպաղ ձեռնարկությունների նաև շահագործման ծախքերը, նույն թվում բանվորներին և ծառայողներին տրվող աշխատավարձի ծախքերը, վարչատնօնական ծախքերը, հարկերի և տուրքերի վճարումը և այդ ձեռնարկությունների գործառնական ծախքերը: Այդպիսով այն ծախքերը, վոր նախատեսված են ձեռնարկությունների համար 1-ին, 2-րդ և 6-րդ հոգվածներով, ձեռնարկության համար միացվում են մեկ՝ հոգվածի, այն և 6-րդ հոգվածի տակ ընդհանուր վերնադրով «շահագործման ծախսեր»:

7-րդ հոգվածով (սովորողների նյութական ապահովումն) անց են կացվում սովորողներին տրվող թոշակների և այլ սահմանված նպաստների, գրենական պիտույքների (գրքեր և այլն), հանրակացարաններում սովորողներին պահպանելու և սեղան ծախքերը, ինչպես և նրանց հագուստեղինով, կոշկեղենով և նյութական ապահովման այլ ձեւերով բազարարելու ծախքերը:

Բացի այդ յոթ հոգվածից, կան նաև վերե թված չորս հոգվածներ ևս: Սակայն պետք և ասել, վոր Անդրկովկասի պայմաններում այդ վերջին չորս հոգվածները դյուդական բյուջեներում հաղիսվ թե գործադրություն գտնեն, քանի վոր այդ բյուջեյում տնտեսական հաշվարկի ձեռնարկություններ հավանութեն չեն լինի: Այդ պատճառով անհրաժեշտություն չկա մանրամասնորեն կանգ տոնելու այդ հոգվածների և նրանց նշանակման վրա:

ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԼԱՍԻՖԻԿԱՑԻԱՆ (Անվանակարգ)

Յեկամուտների կլասիֆիկացիան կառուցված և այլ կերպ: Նա բաժանում է յեկամուտները յերեք հիմնական խմբերի՝ Ա-համայնական սեկտորի վճարումները (բյուջեյին), Բ-հանրայնացված սեկտորի վճարումները և Գ-այլ Փինանսական ինստիտուտներից և այլ աղբյուրներից կատարվող մուտքերը:

Բացի այդ, հատուկ խմբակում տուանձնացված են

կարգավորման ֆոնդերը (9) և բյուջեատային միջոցների մնացորդները (6): Այդ խմբերը բաժանվում են հասվածների, ըստ գորում վորոշ հասվածներ կրկնովում են յերկու խմբերում:

Յեկամուտների կրամփիկացիան անի հետեւյալ ձեր՝

Ա. Խմբակ—հանրայնացված սեկտորի վճարումները

Հատված 1. Արդյունարերություն.

» 2. Փյուտպանակություն.

» 3. Տնականարանային և կոմունալ անակություն.

» 4. Ապեսար, առեստեզենի, արդյունարերություն, կոսովերացիա:

» 5. Կառ:

» 6. Տեղական հարկեր և տուրքեր հանրայնացված սեկտորի ձեռնարկությունից:

» 7. Զանազան յեկամուտներ:

Բ. Խմբակ—չհանրայնացված սեկտորի վճարումները

Հատված 8. Պետական հարկեր և միասնական տուրք:

» 9. Տեղական հարկեր և տուրքեր.

» 10. Զանազան մուտքեր.

» 11. Ինքնահարկում.

Գ. Խմբակ—այլ ֆինանսական տնտեսություններից և այլ աղբյուրներից կատարվող մուտքեր

Հատված 12. Պետ. բյուջեյից հանձնվող միջոցներ.

» 13. Միջոցներ այլ աղբյուրներից.

» 14. Փոխառություններ.

Դ. Խմբակ

Հատված 15. Կարգավորման ֆոնդեր:

» 16. Տեղական դործկոմների կարգավորման ֆոնդեր.

Ե. Խմբակ

Հատված 17. Բյուջեատային միջոցների մնացորդներ:

Բոլոր խմբակների հատվածները բաժանվում են պարագրաֆների, բայց հետագայի բաժանումների միանման հոդվածները ունի միայն Ա. Խմբակը: Այդ խմբակի յեկամուտները հաշվի առնելու համար սահմանված են 5 հոդվածներ.

Հոդված 1. Մասհանում ոգուտներից:

» 2. Ընդհանուր յեկամուտ:

» 3. Կապալավարձ:

» 4. Յեկամտային հարկ:

» 5. Միասնական ձկնորսական տուրք:

1-ին հոդվածով անց են կացվում ԽՍՀՄ. ԿԳԿ. և ԺԿՄ. 1930 թ. ուղարկմբիրի 2-ի և 1931 թ. ոգոստոսի 16-ի վրաչումների համաձայն բյուջեն մացվող ոգուտոների մասհանումը այն տեղական նշանակություն ունեցող ձեռնարկությունների, վորոնք փոխադրված են տնտհաշվարկի:

Յեթե գյուղինքուրհուրդին ամրացված ձեռնարկությունը, ինչ բնույթի ել ուղում ե նա լինի, արդյունաբերական (աղյուսի գործարաններ, աղացներ և այլն) կամ կոմմունալ (բաղնիքներ-ջրմուղներ և այլն) պահպան ե տնտեսավարական հաշվարկով, այսինքն ունի իր կանոնագրությունը, իր ինքնուրույն ֆինանսները և իր ամրագի յեկամուտներով ու ծախսերով գյուղական բյուջեյի մեջ չի մանում, ապա այդպիսի ձեռնարկությունը պարտավոր ե իր ողուտների մի մասը հատկացնել գյուղական բյուջեյին:

Յեթ հենց այդ յեկամուտներն են, վոր անց են կացվում 1-ին հոդվածով:

2-րդ հոդվածով անց են կացվում ընդհանուր յեկամուտները, նույնպես ձեռնարկությունների, բայց այնպիսիների, վորոնք պահպան են բյուջեյով, ինչպես և գյուղխորհրդին ամրացված մյուս գույքերի ընդհանուր յեկամուտները:

Այդ հոդվածով անց են կացվում յեկամուտները այն գույքերից և ձեռնարկություններից, վորոնք շահագործովում են անմիջաբար գյուղխորհրդի կողմից, այսինքն չեն փոխադրված տնտհաշվարկի և պայմանագրերով կապալով չեն արված:

Նետեյալ 3-րդ հոդվածով անց են կացվում ամեն տեսակի գույքը, կամ ձեռնարկությունը կապալով տալուց գյուղխորհրդին հանձնվող կապալավարձը:

4-րդ հոդվածը հատկապես նշանակում ունի հանրայնացված սեկտորի այն կազմակերպությունների համար, վորոնք գոյություն ունեցող կանոնների համաձայն վճարում են յեկամտային հարկ, վոր ամբողջությամբ անցնում ե տեղական միջոցների հաշվին: Այդպիսին են՝ գյուղխորհրդի տերը իտորիայի վրա գտնվող զանազան սիստեմների կոոպերատիվ կազմակերպությունները

(սպասադական, որպիտնաբերական)։ Հարկավոր և հիշել, վորայի հարկը անց և կացվում ըրջանային ֆինբանականի կողմից և վարդապահ գյուղական բյուջեները մացնելը կամ չմացնելը կախված է ըրջպարձիռմի վրաշտումից։

5-րդ հոդվածով անց են կացվում մահանումները ձկնարդյունաբերական (ձկնարարական) կորանակառաթյուններից։ Այդ տարքը նայնպես անց և կացվում ըրջֆինբանի կողմից և գյուղական բյուջեն մացնելը նույնպես կախված է Ծրջպարձիռմի վրաշտումից։

Մյուս խմբերում այդպիսի միանման բաժանումները բառ հոդվածների չեն, թեև տառնձին պարագրաֆներն այնուամենականից բաժանվում են հոդվածների։ Այդ հոդվածների համարները գրված են բառ հերթի, այսինքն հետեւյալ հոդվածները կիրառն 6-րդ, 7-րդ, 8-րդ և այլն։ Կյասիֆիկացիայի յեկամատային մասում ընդամենը կտ 24 հոդված։ Հոդվածները բաժանվում են հետեւյալ խմբերի («Ա» խմբից հետո) 8-րդ հատվածում § 1-ի յեկամատային հարկ և § 2—արհեստագործական հարկ մասնավոր ձեռնարկություններից և արհեստաներից, 13-րդ հատվածում—§ 6 կորանակառաթյուններից հանձնվող միջոցները և 14-րդ հատվածում—§ 1 յերկարատեղ փոխառություններ։

Այդ հատվածների մյուս պարագրաֆները և մնացած հատվածների բոլոր պարագրաֆներն ըստ հոդվածների բաժանումներ չունեն։

Ենք գյուղխորհրդին հայտնի կղառնան կոնտրոլ թվերը և բոլոր դիրքեկտիվները, վոր պիտի արտացոլվեն բյուջեում, գյուղխորհուրդը ձեռնամուխ և լինում գյուղական բյուջեն կազմելուն։ Դրա համար նա պահանջում է իր անորինության տակ գտնվող ձեռնարկություններից և հիմնարկություններից, կոնտրոլ թվերի հիման վրա տրված լիմիտների սահմաններում, կազմել և ներկայացնել խիստ սահմանված ժամկետներում, անհատական նախահաշիվներ։ Անհատական նախահաշիվներում պետք է բերված լինեն մանրամասն բոլոր հաշիվները, վոր հիմնավորում են առաջադրվող ծախքերը։ Այդպես, յեթե գործը վերաբերում է դպրոցին, պետք ե ցույց տրված լինի բյուջեատային տարրվա սկզբին փոխագրվող աշակերտների թիվը, նույն տարրվա բնթացքում բաց թողնվելիք և նոր ընդունվելիք աշակերտների թիվը և դրա

կառակցությամբ միջին հաշվով տարկա սովորողների
միջին կոնտիդենտը, կոմպլեկտների թիվը, դրույժները,
ինչպես և պետք է մատնանշված լինեն ճշգրիտ հաշվառք-
ներ բոլոր մյուս նորմավորված ծախքերի նկատմամբ:
Այս գեղգում, յերբ գործը վերարերում և առողջապա-
հական հիմնարկին, ապա պետք է մատնանշված լինի
մահակալների, հաճախորդների և հաստիքային կոն-
տիդների քանակը, պետք և ճշգրիտ հաշվարկված լինեն
աշխատավարձի ֆոնդը և մյուս նորմավորված ծախքե-
րը: Նույնը և գյուղատնտեսության վերարերյալ և ընդ-
հանուր վարչական ապահարատի նկատմամբ: Ասածները
վերարերում են ծախքի մասին: Նույնանման ճիշտ հա-
շիվներ պետք է գրվեն նաև յեկամտային մասի հաշվարկ-
ման հիմքում:

ՅԵԿԱՄՊՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Յեկամուտները հաշվելու ժամանակ գյուղխորհուր-
դը հասունկ ուշադրություն պետք է դարձնի գյուղխոր-
հրդին ամրացված գույքերի ձեռնարկությունների յե-
կամուտների վրա, ինչպես նաև գյուղխորհրդի կողմից
անցկացվող տեղական հարկերի և տուրքերի վրա:

Հարկավոր է նախապես իմանալ թե այս վերջիննե-
րից վո՞րն ինքը՝ գյուղխորհուրդն և անցկացնելու և վորր՝
շրջիկնբաժինը: Իսկ գրա համար մինչ բյուջեն կազմելն
անհրաժեշտ և ունենալ շրջգործկոմի համապատասխան
վորոշումը: Այնուհետեւ գյուղխորհրդի տրամադրու-
թյան տակ, տեղական հարկերի և տուրքերի վերաբե-
րյալ, պետք է լինեն գրույքներ, փորոնք նույնպես սահ-
մանվում են շրջանային գործկոմի կողմից:

Անցնելով ամեն մի առանձին գանձվելիք հարկի տ-
ուանձին հաշվարկման, գյուղխորհուրդը պետք է համոզ-
ված լինի, վոր այդ հարկի յենթակա բոլոր ոբյեկտները
լրիվ հաշվի յեն առված: Դրա համար ոբյեկտների ցու-
ցակը մանրամասնորեն պետք է ստուգվի:

Վոչ կոպարային հարկերի վերաբերյալ, այսինքն
այնպիսի հարկերի վերաբերյալ, վորոնց համար նախո-
պես որյեկտների հաշվառում չի կատարվում և վճարող-
ներին ծանուցագրեր չեն ուղարկում, որինակ՝ միանվագ
տուրքը, անհրաժեշտ և հաշվարկումների ժամանակ դե-

կապարվել անցյալ առարիների մուծումների շարժման վերաբերյալ ամփայիներով:

Վարուշ չափավ այլ կերպ և կատարվում պետական հարկերից և յեկամուտներից ստացվելիք դումարների հաշվարկումը: Միտունական դյուզանանական հարկի վերաբերյալ նախական հաշվարկումը կատարում և դյուզիուրարգը, վերջանկանը—շրջֆինրամինը:

Աւրիչ պետական հարկերը և առաքերք, բացառությունը պետմիաստարքից, անց են կացված շրջֆինրամներ կողմից, վորք և հայանում և դյուզիուրէրդին այն դումարի չափիք, վորք մուծվելու յև ամյալ դյուզական բյուջեն: Մասնավորապես և դյուզհարկի պետական փոխառությունների իրացման վերաբերյալ ամեն դյուզիուրէրդի արժում և կոնտրոլ թիվ, վորք և պետք և զրոյի յեկամուտները հաշվարկելու հիմքում:

Պետական միասնական տուրքի վերաբերյալ, ինչպես և վոչ կապարային աեղական հարկերի և տուրքերի վերաբերյալ հաշվարկումները կատարվում են անցյալ ապարիների մուծումների շրջֆինրամի ամյալ տուրքի հիման վրա:

Ինչ վերաբերում և վարկային հիմնարկություններից ստացվող փոխառություններին, բյուջեն մտցվում են միայն այն գումարները, վորոնք դյուզիուրէրդին անոպայման արվելու յեն, զբահեա միասին պետք և վորոշակի հայանի լինի, թե փոխառության ինչպիսի դումար, ինչ նպաստակի համար կստացվի, ինչ ժամկետով և վոր վարկային հիմնարկություննից (Պետրանկ, Կոմընկ): Դուսացիայի չափը, ինչպես նաև շրջանային կարդավորման ֆոնդից արվող նպաստի մասին դյուզիուրէրդին պետք և հայանի շրջդորձկոմի կողմից նրա ֆինրամնի միջոցով:

Զանազան յեկամուտների, տուգանքների, բռնադպումների և այլ մուծումների հաշվարկումը կատարվում և նախ այնպիսի կոնկրետ ավյալների հիման վրա, վորոնք բնորոշում են այլ աղբյուրներից սպասվող մուծումների չափը, և ապա համաձայն անցյալ տարիների նման մուծումների չափի:

Բյուջեապային միջոցների մնացորդները հաշվարկվում են առ 1-ը հունվարի կանխիկ մնացորդների ճիշտ ավյալների հիման վրա, ըստ վորում առանձին պետք ե-

Հաշվարկվեն ինքնահարկման միջոցների մնացորդները և
առանձին այլ բյուջեային մնացորդները: Բյուջեն
ինայդրտամարկղի միջոցով կատարելու պայմաններում
վարակ ինքնահարկման վերաբերյալ կա Հատուկ «Գ»
հաշիվ, մնացորդները հաշվարկել չափազանց հետ ե:

Այն գեղգում, յերբ գեռ ինքնահարկման վերաբե-
րյալ կամպանիան չի անցկացված, մուծումների հաշ-
վարկումը կապակցվում է գյուղհարկի հաշվարկման
հետ, ինքնահարկման վերաբերյալ որենքի համեմատ:

Վերջապես կորոնտեսությունների կողմից զանազան
սոցխալ-կուլտուրական և ժողովրդական կրթության,
սուլջապահության, ճանապարհային տնտեսության,
բարեկարգման և այլ տնտեսական ձեռնարկումներ անց-
կացնելու համար գյուղխորհրդին հանձնվող գումարի
հաշվարկումը պետք է համաձայնեցվի նախ այդ հարցի
վերաբերյալ գոյություն ունեցող որենսդրության և ա-
պա անմիջաբար համապատասխան կոլանտեսության
վարչության հետ:

ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊԼԱՆԸ

Կատարելով բյուջեյի յեկամտային, մասի լրիվ
հաշվարկումը, գյուղխորհրդությը սկսում է կազմել նրա
ծախքային մասի նախագիծը:

Բայց նախ քան ծախքերի հաշվարկումն սկսելը,
գյուղխորհրդին անհրաժեշտ ունենալ արտադրական
պլան:

Արտադրական պլանը ներկայացնում է իրենից
տնտեսական ձեռնարկումների ծրագիրը, վորը գյուղա-
կան խորհուրդը յենթադրում է իրազործել տվյալ
բյուջեային տարում: Արտադրական պլանը պետք է
կապակցվի այն միջոցների շափի հետ, վոր ունի գյուղ-
խորհրդությը իր տրամադրության տակ և համաձայնեց-
վի շրջանային գործադրի կոմիտեյի հետ:

Պլանը պետք է նախատեսի, թե քանի՛ նոր գպրոց-
ներ, խրճիթ-բնթերցարաններ, լիկէայաններ, մանկա-
պարտեղներ և այլ հիմնարկներ ե յենթադրվում բաց ա-
նել նոր տարում: Ինչքան յերեխաններ են ընդգրկվելու
դպրոցներում և մանկապարտեղներում, անգրագետներ-
լիկէայաններում և այլն, քանի խմբերով կամ կոմպ-
լեկտաններով են ընդարձակվելու գոյություն ունեցող

գողրացներ, քանի մահճակալավ և լոյնանարու զյուղի Հիմնագանցը և արիշ բժշկական Հիմնարկները, քանի պղբացական շննդիր կամ արիշ Հիմնարկների համար աներ են վենթաղբայրամ շինելու նոր տարում և այդ շինարարության ծավալը (քառ. մետրերավ), վերջապես ինչ քանակով հասարակավոր միավարներ են լինելու նոր Հիմնարկներում և ինչպես են բնդարձակվելու հասարակները զայտթյուն անեցազ Հիմնարկներում:

Առանց այդպիսի արտադրական պրանի բրուջելի ծախքի մասու կապուցել չի կարելի, քանի վոր յեթէ չիմացվի, թե ի՞նչպես են բնդարձակվելու առանձին Հիմնարկները և ինչպիսիք են նոր կազմակերպելու, չի կարելի կազմել անվտանգան նախահաշեմները:

ԲՅՈՒՃԵՑԻ ԾԱԽՔԱՅԵՆ, ՄԱՍԻ ԱՂԲՅՈՒՆՐԻ

Անվանական նախահաշեմներն ըստանալուն պես դյուզիսորհուրդը քննում և և համաձայնեցնում արտադրական պլանի, հանրապետական ֆինանզկոմատի հաստանոված հաստիքների և ծախքերի նորմաների հետ: Նույն այդ կարգավ ել քննարկվում են ձևոնարկությունների արդիինապլանները:

Այսուհետեւ անհատական նախահաշեմները գումարվում են ըստ միանման Հիմնարկների (առաջին աստիճանի պղբացների, լիկիտյանների և այլն), և բնդհանուր գումարը բաժանված հոգվածների, մացվում և բրուջեացին կրասիֆիկացիայի համապատասխան պարագրափի մեջ:

Անհատական նախահաշեմների և արդիինապլանների համեմատ, լրացվում են բյուջեային կրասիֆիկացիայի ծախքի մասի հատվածները 1-ից 14 ներառյալ, ինչպես նաև 18 հատվածի 1-ին ֆը «սոցապի Հիմնարկներին հանձնվող միջոցները»: Այդ պարագրափը լրացնելու համար ողատագործվում և անհատական նախահաշեմների համապատասխան աղյուսակը:

Հարկավոր և աչքի առաջ ունենալ, վոր անցյալ տարվա պարագը, վոր զոյացել և ըստ Հիմնարկների առ 1-ին հունվարի, ավելացվում և ամեն մի տվյալ Հիմնարկի ծախքերի և առանձին ամեն մի հոգվածի վրա: Իսկ սուցապի պարագը անց և կացվում 18 հատվածի համապատասխան պարագրափով:

Հարց ե ծագում, ինչե՞ս կարող ե առաջանալ պարտքը և ինչպիսի պարտքերը պետք ե ծածկվեն նոր պարզությունիցի հաջողից:

Պարտքը ըստ հիմնարկույան կարող ե գոյանալ այն դեպքում, յերբ վորեւ պատճառով յեկամտային մասի վերաբերյալ յենթադրությունները չեն արդարացել և դրա հետեանքով հասրավորություն չի յեղել բավարարել հիմնարկի բոլոր պահանջները հաստատված նախահաշվի համաձայն: Արտանախահաշվային ծախքերը, կատարյած հիմնարկի կողմից ինքնակամ, առանց դյուզիորհրդի թույլտվության, պարտքերի թվին չեն կարող դասվել:

Եինարտրության և հիմնական վերանորոգման գծով պարտք կարող ե ասածանալ այն գեպքում, յերբ նյութերի արժեքն ու բանվորների աշխատավարձը շինարարության պլանում հարկավոր չափով չեն նախատեսված: Վերջապես վորովհետեւ հունվարիր 1-ին անցյալ տարվա բոլոր վարկերը ծածկվում են, ասուա պարտք կարող ե տաճանալ նաև նրա հետեւանքով, վոր հիմնարկիները առ այդ թիվը չեն կարողացել իրացնել բացված վարկերը: Այս կամ այն հիմնարկի պարտքերը ընդունելիս, դյուզիորհրդը պետք ե քննության առնի դրանցից յուրաքանչյուրը, և նայած թե վորքան որինական ե մնացած պարտքը, ընդունել այն, կամ մերժել: Մարդում են միայն փաստորեն կատարված ծախքերի պարտքերը, վորոնց համար գումարներ չեն վճարված կանխիկ միջոցների բացակայության հետևանքով, որինակ՝ այն գեպքում, յերբ հիմնարկությունը իր ժամանակին չի վճարել-աշխատավարձը կամ ոգումնել ելեկտրոկայանին հասանելիք վարձը: Վոչ մի դեպքում չի կարելի պարտքի թվին դասել, նախահաշվով հաշվարկված, բայց չվճարված բոլոր վարկերը: Դյուզական բյուջեյով գոյացած պարտքը համենայն դեպս չի կարող գերազանցել բյուջեային միջոցների առ 1-ը հունվարի մնացորդները:

Սոցալի անցյալ տարրվա պարտքը անց ե կացվում 18-րդ համվածի 4-րդ ֆուլ:

Մնացած հատվածների ծախքերը հաշվարկվում են հետեւալ կարգով:

Հասոված 15 «օպտհեստի և սեղերի ֆոնդեր»—ըստ
ժամանակամատ և յերեք պարագրութիւն:

§ 1. «Հնախառանաված ծախքերի ֆոնդ», § 2 «Ժամա-
նանամներ անզական բյուջեյի սեղերին», § 3 «այլ
ծափեր»:

Վերևում մատհանչված և, վոր որենքով թույ-
լաբրժած և մատհանել չնախառանաված ծափերի ֆոն-
դին, բյուջեյի բնդհանուր զումարի միջե 3 0/0-ը: Առ-
կայի այդ մատհանամները 3 0/0-ի չափավ կարող են կա-
տարի միայն այն գեղքառմ, յեթե կան ազատ միջոց-
ներ, հակառակ զեղքառմ անհրաժեշտ և սահմանավակել 1—11/2-ից փոչ ամենի մատհանամով: Անցյալ առաջտ
ոգբակաթիկան ԱՍՖԽՀ Հ-ում, ցայց և տարիս, վոր անզա-
կան բյուջեների զիփեցիայնության հետեւնքով
չնախառանաված ծափերի ֆոնդի համար կատարված
համկացամները, սովորաբար բյուջեյի զումարի 10/0-ից
շին զերագանցում:

Տեխնիկապես մատհանամները կատարվում են հե-
տեւյալ կարգով՝ յերբ հաշվարկված և ամբողջ յեկա-
մատացին մարր, այդ ժամանակ յեկամուաների ամբողջ
զումարից մատհանաված և 1—11/2-0/: Մնացած բոլոր
ծափերը այդպիսով պետք և կազմեն 98,5—99 0/0:

Վոչ ԱՍՖԽՀ և վոչ ևլ ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող
հանրապետությունների որենսգրությամբ անզական
բյուջեյով սեղերի կարգավերաբումը չի նախառանաված:
Այդ պատճառով վոչ մի մատհանում 2-րդ Տ-ով կատա-
րել հնարավոր չե, մինչեւ այն ժամանակ, յերբ կհրապա-
րակի համապատասխան որենք:

Յերբորդ Տ-ը գյուղական բյուջեյի ծախքերի համար
չի դորձադրվում:

16-րդ Հատվածով—«Վոխապատթյունների ծախ-
քեր»—հաշվարկված նն այն գեղքառմ, յերբ գյուղխոր-
հուրդը, նրան տրված վարկի հետեւնքով, պարտք ու-
նի վորեւ բանկին կամ խնայդրամարկղին: Մախքը հաշ-
վարկվում և այն կումարի պարտքի նկատմամբ, վորը
համաձայն բանկի հետ կնքած պայմանագրի աետք և
մարդի սովորալ բյուջեային տարում: Պարտքի վրա ա-
վելացվում են նաև այն տոկոսները, վորոնք պետք ե-
լի հարցին:

17-րդ Հատվածը—«Պանազան ծախքեր» բաժանվում

Ա չորս պարագրաֆի, բայց գյուղական բյուջեյով ծախ-
քեր կարող են տեղի ունենալ միայն առաջին յերկու պա-
րագրաֆով, այն ե՝ 1-ին Տ-ով «սխալ ստացված յեկա-
մուտների վերադարձ» և 2-րդ Տ-ով «զանազան վնասներ
և դրամարկղային սխայներ»:

Վճարողների գանձման վերաբերյալ, գյուղխորհրդի
կողմից, առանձին վճարողներին կարող են վերադարձ-
վել նրանցից գանձման հարկերը և ուրիշ վճարումները:
Յեթէ կայսցի այդպիսի վորոշում՝ ապա վճարողին ան-
հրաժեշտ է վերադարձնել դրամը, այն ինչ նրանք արդեն
մուծված են յեկամուտների մեջ և ծախսված։ Հենց վե-
րադարձվող գումարների հաշվառման համար ել ծառա-
յում և այդ համվածի 1-ին Տ-ը։

Շատ թե քիչ ճշտությամբ հաշվարկել անհրաժեշտ
գումարը դժվարին ե, քանի վոր հայտնի չե, ինչ գու-
մարի նման գիմուտներ կստացվեն և ինչ գումարով
կրամաբարվեն։ Այդ պատճառով հաշվարկումը հարկա-
վոր և կատարել անցյալ տարիների փորձի հիման վրա,
հաշվի առնելով հարկման և ուրիշ վճարումների ընդհա-
նուր գումարի ամելացումը, վոր մուծվելու յե գյուղ-
բյուջեն։

2-րդ Տ-ով, ծախք ըստ գյուղական բյուջեյի, կարող
և տեղի ունենալ միայն այն դեպքում, յերբ գյուղխոր-
հուրդն ունի սեփական դրամարկղ։ Բայց վորովհետեւ
գանձապահի աշխատանքների պայմանները և ծավալը
ոյնպիսի չեն, վոր սխալներ տեղի ունենան, ապա գյու-
ղական բյուջեյում այդ ծախքը չի լինի։

18-րդ հոդվածով—«սոցապի հիմնարկներին հան-
ձնվուզ միջոցները» 1-ին և 4-րդ պարագրաֆներով անց-
նող ծախերի հաշվառման մասին արդեն ասված և վերե-
լում։ Իսկ ինչ վերաբերում ե 2-րդ և 3-րդ պարագրաֆ-
ներին, ապա գրանց վերաբերյալ հաշվարկման կարդը
հետեւյալն ե՝ 2-րդ պարագրաֆով բանվորների և ծառա-
յուղների սոցապահովագրման գումարը հաշվարկվում ե
3-րդ հոդվածով «նոր շինարարություն» և 4-րդ հոդ-
վածով «հիմնական վերանորդում» հաշվի առնվոր աշ-
խատավարձից։ Այդ յերկու հոդվածներով բյուջեյով
անցնող ամեն մի գումարի վրա նախապես կազմվում ե
մանրամասն նախահաշիվ շինարարություն կամ վերանո-
րդման վերաբերյալ։ Նախահաշվում առանձնացվում են

աշխատավարձք և սոցակի համար կատարվող ամերացներիք։ Այդ վերջինները պետք է հանդին Յ-րդ հոգվածներով անցկացվող զումարից և անցկացվեն 18-րդ հոգվածի 2-րդ Տ-ով։

3-րդ պարագրաֆով հաշվի յի առնվամ ուրիշ հողվածների բանափորների և ծառայողների սոցապահագրությունը։ Մյուս հոգվածներից աշխատավարձն անցնում է 6-րդ հոգվածով «շահագործման ծախքեր» միայն այն արդյունաբերական ու կոմմանալ ձեռնարկությունների, վորոնք տնտեսվարքի չեն անցկացված և սրահվամ են բյուջեյով։ Այդ ձեռնարկությունների բանի գործիքների և ծառայողների սոցապահագրման համար ային կացվությունը զումարները հարկավոր և տուանձնացնել բառ այդ ձեռնարկինների արդ ֆինովանների։

19-րդ հատվածը մացված է բյուջեատային կլասիֆիկացիայի մեջ՝ ԱԱԾԽՆՀ միայն ինքնավար հանրապետությունների բյուջեներով կատարվող ծախքերը համար։

20-րդ հատվածով «կարգավորման ֆոնդեր»—հաշվի յին առնվամ ըրջանային կարգավորման ֆոնդերին կատարվող մասնանումները, վորոնք ըրջանային գործադիր կոմիտեների վորոշմամբ կարող են կատարվել գյուղական բյուջեյով կամ բնողհանուր յեկամուտների գումարից կատարվող առկասային հատկացումներով կամ գյուղական բյուջեները մտնող վորևել յեկամուտային աղբյուրի վորոշ մասով և այն և մյուս գեղղերում գումարները գյուղինորհուրդը հաշվարկում և ըրջանային գործկոմի վորոշման համեմատ ամենայն ճշտությամբ։

Հետեւյալ 21 հատվածը հաշվի յի առնվամ այն ծախքերը, վոր կատարվում են ի հաշիվ ինքնահարկման միջոցների։ Այդ հատվածը բաժանվում է 13 պարագրաֆների, վորոնք նախատեսում են ձեռնարկումների առանձին տեսակները, վորոնց համար կարող են կատարվել ծախքեր ի հաշիվ ինքնահարկման միջոցների։ Պարագրաֆները բաժանվում են հոգվածների։ Այդ ծախքերը հաշվարկելու համար նույնպես գործադրվում են անհատիկան նախահաշիվների ձեվերը, բայց կարող են կազմվել նաև առանձին նախահաշիվներ։ Թե այս և թե այն

այդ ծախքերը հաշվի առնելու համար անհրաժեշտ են, վորոնք կատարվում են ի հաշիվ ինքնահարկման միջոցների:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՈՒՁԵՑԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

«Ճեղակոն մարմնների բյուջեային իրավունքների վերաբերյալ ժամանակավոր կանոնագրության» համաձայն, վոր հաստատված և Անդրկովկասյան կառավարության կողմից 1930 թ. նոյեմբերի 12-ին, գյուղական բյուջեն հաստատվում և գյուղխորհրդի կողմից նախապես, իսկ վերջնական հաստատման իրավունքը վերապահած և շրջանային գործկոմին կամ ինքնուրույն քաղխորհրդին՝ նրա յենթակա գյուղխորհուրդների նկատմամբ:

Գյուղական բյուջենի հաստատման այդ կարգը վորչում և նուև նրա անցնելու կարգը:

Գյուղական բյուջեն կազմվելուց հետո, յերբ նաքննարկված և գյուղխորհրդի սեկցիաներում և հավանություն և ստացել նախագահության կողմից, նա մացկում և գյուղխորհրդի պլենումին հաստատելու համար: Գյուղխորհրդի պլենումի հաստատելուց հետո, գյուղական բյուջեն ներկայացվում և շրջանային ֆինանսների միջոցով շրջորդեկոմին, վորը նրան քննության և առնում և վերջնականապես հաստատում:

Հետապատճենած աստիճաններում (խորհուրդների շրջանային համակումարը և ԱՄՖի և կազմի մեջ մտնող հանրապետությունների կառավարությունները) գյուղական բյուջեն հաստատվում և միայն շրջանի բալոր բյուջեների ամփոփման (սվող) մեջ: Առանձին ամեն մի գյուղական բյուջեն չի քննվում և չի հաստատվում:

Գյուղական բյուջեն շրջանային գործկոմի կողմից հաստատվելուց հետո հանձնվում և գյուղխորհրդին կատարելու համար:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՅՈՒՁԵՑԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ԲՅՈՒՁԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Պլանի սահմաններում գյուղական բյուջեն կառարեցնական վարել գյուղի անտեսությունը, այսինքն՝
1) հսկողություն սահմանել գյուղական բյուջեյի յեկա-

մուտերը ժամանակին և յրիդ մուծվելու վրա և միջոցներ ձեռք տոնել այլպիսիք շահնձերու համար, 2) կառարել դյուզական բյուջենու նորառելով և համաստված ծախքերը, 3) հաշիվ պահել թե մուծումների և թե ծախքերի վերաբերյալ:

Դրա գուման բյուջեն կառարվաւմ և ոյաւղիսորհրդի կողմէց՝ համար նրա նախազանիքի: Բյուջեյի կառարման տեխնիկական ոշխառանքը պրօւմ և փինուշխառակցի վրա, իսկ մերժինիո բացակայության դեղքում՝ դրապիսորհրդի քարտազարի վրա:

Երբն համեմատ, գյուղիսորհրդի նախազանին իրավունք և վերապահմած տատչին տոտիճանի վարմերի վերաբերյալ կարգադրություններ տնելու: Բյուջեն կառարելու բնադրութառում, իր բոլոր քայլերի համար նախազանը հաշվետու յև ոյաւղիսորհրդին:

Բյուջեյի կառարումը կարելի յե սկսել, յերբ նո համաստված և սահմանված կարգով. վորպես կանոն, բյուջեն պետք և համաստված լինի մինչև տարվար սկիզբը, այսինքն, մինչև համելուրի 1-ը: Այդ գեղքում, նր ըստ կառարմանը կարելի յե անցնել նոր տարվա հենց առաջին որից: Բայց հնարավոր և, վոր բյուջեն հաւատավի նոր տարգա սկզբից հետո, յենթագրենք մի ամսից հետո կամ նույն իսկ ուշ:

Թթնչպես վարվել նման դեղքում: Ֆինանսական պրակտիկային համեմատ, վոր սահմանվել և տարիների փորձով, ընթացիկ տարրում դյուզական բյուջեյով անցնող հիմնարկների և ձեռնարկությունների ծախքերը կառարվում են անցյալ տարվա նախահաշվի սահմաններում՝ ամսական այդ նախահաշվիների ^{1/2} մասի չափով: Իսկ նոր բյուջետային տարվա սկզբից կադմակերպված հիմնարկների նկատմամբ, ծախքերը կատարվել են նրանց համար ընդունված նախահաշվիների սահմաններում, բայց սահմանափակվել են առավելապես աշխատավարձի վճարմամբ և անտեսական ծախքերից ամենաանհետաձնելին կատարելով:

Ներկայումս այդ կարգը հարկավոր և համարել աննապատականարմար, չհամապատասխանող այն սլանային սկզբունքին, վորը պետք է դրվի բյուջեյի կառարման հիմքում:

Համաձայն դյուզական խորհուրդների հաշվետվու-

թյան վերաբերյալ գործող հրահանզների՝ հաստատված դյուցական բյուջեների սահմաններում պետք է կազմվեն դրամարկղային ծրագրեր։ Դրամարկղային ծրագրերը հանդիսանում են յեկամուտները ստանալու և այլք յեկամուտները որպացուցային ծրագրի համաձայն այս կամ այն ծախսերի կատարման կամ շինարարության կենսագործման ժամկետների։ Պետք եւ աչքի առաջ ունենալ, վոր բյուջեով նախատեսված վոչ բոլոր ծախքերը պետք եւ կատարվեն համահավասար՝ ամեն ամիս կամ նույնին ամեն յեռամսյակ։ Այն ժամանակ, յերբ աշխատավարձը վճարվում եւ ամեն ամիս կամ նույնին ամսական յերկու անգամ, գործառնական բնույթի ծախքերը՝ սննդի, վառելանյութի, անսառնադուստ և այլն ձեռք բերելու համար, ունեն սեղոնային բնույթ, քանի վոր այդ առարկաները գնվում են միանդամից մեծ քանակով, սովորաբար տարվա սկզբում կամ վերջում։ Շինարարությունը համարյա ամենուրեք տարվա վերջի ամիսներին և առաջի յեռամսյակում դադարում ե, ծավալվում ե յերկրորդ և հատկապես յերրորդ յառամսյակում, գրենական պիտույքների մթերումը կատարվում ե ուսումնական տարվա սկզբից առաջ, փոխառության սկարտքերի վճարումը, պայմանագրերի համաձայն, կարող ե ընկնել վորեւ մի յեռամսյակի կամ ամսվա վրա և այլն։

Յեկամուտները նույնպես հավասար կարգով չեն ստանցվում՝ հարկերի նկատմամբ դա կախված է սահմանված վճարման ժամկետներից։ Գյուղհարկը, որին ակ՝ համարյա ամբողջությամբ մուծվում ե տարվա վերջի յերկամուտների մուծումուները կախված են նրանց սեղոնային բնույթից։ Յեկամուտները գյուղատնտեսական ոգտագործման համար դույքերից ստացվում են աշնանը, բերքը բեալիզացիայի յենթարկելուց հետո։ Յեկամուտների մուծման և ծախքերի կատարման սեղոնային բնույթը հաշվի յեւ առնվում դրամարկղային ծրագրերում, վորոնք կազմվում են ամեն յեռամսյակի համար, իսկ հետո յեռամսյակի սահմանում, ամեն ամսվա համար։

Առանց այդպիսի դրամարկղային ծրագրերի բյուջեն չի կարելի կատարել, այսինքն՝ առանց պլանային

կարգով հաշվառներու յեկամուտների ժամանակները և
այդ յեկամուտների համահամար բաշխումը բառ այն-
ծախքային հոգվածների, վարեցով պետք և կատարվեն
ծախքեր յեսամոյակի ընթացքում կամ այն յեսամոյակի
համապատասխան տվառք :

Առանց նման պլանային հաշվառման, զյուղիսորհը-
կի բառ չեցի կատարման ժամանակ կարող և ձեղքիմած
տաղմանուն, վարը ծածկել զժվարին կլինի:

Զենամախի լիներվ զրամարկվային ծրագիրը կաղ-
մերու աշխատանքներին, զյուղիսորհը պետք և հաշ-
վի առնի այլ յեսամոյակում ժամանակների բա-
լոր յեկամուտները համեմատ այն ժամանակների, վար
սուհմանունուն ևն հարկերի ժամանակների, կազմակազմա-
ծի, զյուղիսորհը իրավասության տակ զանազան ար-
դյունարկան և կամմունալ ձեռնարկությունների ո-
գուաններից կատարիսով ժամանակումների և այլ յեկա-
մուտների համար: Դրամարկվային ծրագրով հաշվարկ-
ված յեկամուտի պումարները պետք և համապատաս-
խաննեն - չըջործկոմի կաղմից հասանալիությունը պրանին և
կատարման ժամանակ դնահատվեն վարպետ կայտն տ-
պաշտքանքներ:

Դրամարկվային ծրագրի համեմատ ծախքերը հաշ-
վարկվում են միայն բյուջեյով կամ լրացուցիչ նախա-
հաշվիներով հասանալիություն պահանջների սահմաննե-
րում: Յեկամոյակի ծախքը հաշվարկելու ժամանակ
նկատի յետ առնվում վոչ միայն նրանց սեղոնային լինելը,
այլ նաև նրանց չտապողականությունը և հերթակալա-
նությունը:

Յեթե միջոցները չբավականացնեն, ապա ծախքե-
րի նկատմամբ պետք և սահմանվի հերթականություն: Առաջին հերթին պետք և բաց թողնվեն միջոցներ աշ-
խատավարծի, հիմանդրների և յերեխանների սննդի հա-
մար և առա արգեն մնացած կարիքների համար, նրանց
շտապողականության կարգով:

Դրամարկվային ծրագիրը պետք և հաշվեկշռված-
լինի, բայց թույլատրվում և, վոր յեկամուտները ծախ-
քերից ավելի լինեն: Հակառակը, այսինքն, վոր ծախ-
քերը յեկամուտներից խցելի լինեն, վոչ մի դեպքում չը-
պետք և տեղի ունենա: Յեկամուտները ծախքերից պե-

ի կարսղ են ստացվել այն դեպքերում, յերբ այն յեռամսյակում, վորի համար կազմվում են դրամարկզային ծրագրերը, յեկամուտները կստացվեն վճարումների համար ստհմանված ժամկետների համեմատ, ավելի քան ծախք կատարելու համար միջոցներ պահանջվում են նույն յեռամսյակում: Դյուզիսորհուրդը պետք է հիշի, վոր մյուս յեռամսյակում կարող է ստացվել հակառակը, այն և՝ վոր ստացիկա անհետաձգելի ծախքեր կարող են լինել ավելի, քան յեկամտային մուծումներ, այդ իսկ պատճառով ստացած յեկամտի ավելացումները պետք են պահպին հետեւալ յեռամսյակի ճեղք մոծքը ծածկելու համար:

Բյուջեյի կատարման պրոցեսում կարող է պարզվել, վոր բյուջեյով և դրամարկզային ծրագրով նախագծված յեկամուտը դյուզիսորհուրդից անկախ պատճառով չի կարող ստացվել, հետեւարար է բյուջեյում և դրամարկզային ծրագրերում ստացվում և ճեղքվածք: Դյուզիսորհուրդը այլպիսի հնարավորություն հայտաբերելուն պարտավոր և անմիջապես միջոցներ ճեղքածքում ընդունելու և կրծառելու դրամարկզային ծրագրերը՝ յեկամուտների կրծառման չափում: Կրծառումը, ինչպիս արդեն մատնաշվել է, պետք է կատարվի այնպիսի ծախսերի վերաբերյալ, վորոնք առանց դործին մնասելու կարելի յի հետաձգել:

Դրամարկզային ծրագրերը կազմվում և ամեն մի յեռամսյակը մուտենալու սկզբին:

Այն յեռամսյակում, վորի համար կազմվում և դրամարկզային ծրագիրը, հնարավոր են վորվոխություններ: Այդ վորվոխությունները կարող են առաջանալ, նախ՝ պլանի կատարման պրոցեսում պարզված վորեւ յեկամտային աղբյուրի մուծման նվազեցումից, վորի կառակցությամբ պետք է կրծառվի և ծախքի մասը, յերկրորդ՝ ծախքերը մյուս ամիս վորխաղբելուց և յերրորդ՝ վարկերի անորինողի հայտարարության համաձայն վարկերը նախահաշվային մի յենթաբաժնից մյուս բաժանմանը վորխաղբելուց: Բոլոր մատնանշված վորվոխությունները կարող են տեղի ունենալ դրամարկզային ծրագրում միայն դյուզիսորհուրդի պլենումի գիտությամբ, վորը հաստատում և դրամարկզային պը-

բանք՝ ինչպես բառ յետմոյտկի, նույնպես և բառ ամիսների:

Վարեկերը դբանց առանձին անորինողներին բացված են միայն դրամարկղային ծրագրի հիման վրա:

Տարվա բնիթացքաւմ կազմված լրացուցիչ նոտարհութիւնների վարիերը նույնական անոր և արտացոլում դրանքն զբաժարկղային ծրագրի մեջ:

ԴՅՈՒՂԱԿԱՆ ԲՅԱԽՁԵՆ ԾԵՎ ԿԵԱՅԴՐԱՄԱՐԿԱՐ

Դյուղխորհրդի դանձաղահը, բառ կանանի, պետք և ինքի պետական աշխատավարտիւնն իննայդական դրամարկից տեղափակութեամբ այնքան առկայն անհրաժեշտ ե տակէ, վար մինչև այժմ աշխատավարտական իննայդակամտրկղներ կան վոչ բոլոր դյուղխորհրդարդներում: Բայց և նրանք, վորոնք կան, Համարի իրենց անպատճառատականություններին հետեւնք չեն կարող իրենց վրա վերցնել դյուղական բյուջեն սպասարկելու Համար գործարքներ կատարելու պարտականությունը: Այդ պատճառով թայլատրվում ե դյուղխորհրդարդներին կազմակերպել իրենց Համար յեկամտային ծախքային դրամարկղներ:

Դյուղխորհրդարդների և իննայդարամարկղների մոխարարերությունները վորոշվում են «Գյուղական խորհուրդները դյուղական իննայդարամարկղների կողմից դրամարկադիմ սպասարկման վերաբերյալ ժամանակավոր կանոններով»: Հաստատված են ԽՍՀՄ ֆժկ. 1930 թ. նոյեմբերի 14-ին և Հրապարակված են ԽՍՀՄ ֆժկ. 1930 թ. նոյեմբերի 25-ին № 44-45 իզվեստիայում:

Այդ կանոնների Համաձայն իննայդարամարկղը դյուղբյուջեյի Համար բաց ե անում իր մոտ Յ Հաշիվ:

Հաշիվ «Ա» Գյուղական բյուջեյի գումարների Հաշիվ
» «Բ» Գյուղխորհրդարդի տրամադրության տակ դանվող զանազան գումարների Հաշիվ և
» «Գ» ինքնահարկման գումարների Հաշիվ:

Գյուղական բյուջեյի գումարների «Ա» հաշվին դրանցվում են այն բոլոր յեկամտային գումարները, վորոնք մուծվում են Հոգուտ դյուղական բյուջեյի և անցնում են նրա յեկամտային մասով, այն ե՝ տեղական Հարկերը և տուրքերը, դյուղխորհրդին ամրացված գույ-

քերից ստացվող յեկամուտները, գյուղական բյուջեին
նպաստը, վոր փոխանցվում և շրջանային գործկոմի
կողմից, պետական հարկերից և յեկամուտներից սահ-
մանված մահանումները, վորոնց թվում և գյուղի տեր-
թառքիայի սահմաններում իրացվող պետական փոխա-
ռությունների մուծումներից մասհանումները, ինչ-
պես այն մասհանումները, վոր մուծվում են կոլտնտե-
սությունների կողմից, յեթե նրանք նշանակված են
գյուղխորհրդի բյուջեյում և այլն,

«Բ» զանազան գումարների հաշվի վրա գրանցվում
են տառջինը՝ գյուղխորհուրդի տրամադրության տակ
գտնվող այնպիսի գումարներ, վորոնք փոխանցվում են
շրջգործկոմների կամ ուրիշ մարմինների կողմից՝ այդ
մարմինների բյուջեյի հաշվին ծախքեր կատարելու հա-
մար: Այսպես, որինակ, յեթե գյուղխորհուրդների տեր-
թառքիայի սահմաններում գտնվում են մի հիվանդա-
նոց, վորը պահպան և շրջանային բյուջեյով, ապա նրա-
նու պահպանման համար միջացները կարող են փոխանց-
վել գյուղխորհրդի տրամադրության տակ, բացառապես
այդ: Հիվանդանոցի վրա ծախսելու համար: Այդ միջոց-
ները գյուղխորհուրդին չեն պատկանում, այլ միայն
գտնվում են նրա կարգադրության ներքո: Այդ պատ-
ճառով գյուղական բյուջեյի գումարների «Ա» հաշվի
վրա գրանցվել նրանք չեն կարող, հետևապես նրանք
չեն կարող ծախսվել նաև ուրիշ կարիքների վրա:

Այսուհետեւ «Բ» հաշվի վրա գրանցվում են զանա-
զան փոխանցիկ գումարներ գյուղխորհուրդին ամրաց-
ված գույցի կապալաւումների կողմից մուծվող կանխա-
վճարների նման: Այդ գումարները նույնպես գյուղ-
խորհուրդին չեն պատկանում և յենթակա յեն վերա-
դարձման նույն կապալաւումներին՝ կապալի ժամկետը
լրացնելուց հետո կամ պայմանագրով սահմանված ժա-
մանակը անցնելուց հետո:

Բացի գրանից «Բ» հաշվին են գրանցվում նաև պա-
տճառաբար գյուղխորհրդի տրամադրության տակ մուծ-
ված, վորնեւ հատուկ նշանակում ունեցող գումարներ,
ինչպես նաև չոլարգված գումարները, վորոնք մտնում
են այդ հաշվի վրա, մինչև վոր պարզվի նրանց ում պատ-
կաննելը և նշանակման հարցը: Յեթե պարզվի, վոր
այդ գումարները պատկանում են գյուղական բյուջե-

լին, ապա նրանք ունեիջառեն փոխանցվում են «ԱՀ» հաշվին։ Հակոբոսի զեղքամ հանձնվում են ըստ նշունքություն։

Բնդիմահարկման դուժարների «Ի՞՛ հաշվին», զրանցվում են միայն բնդիմահարկման կատարված մուծումները։

Բայսր յերեք հաշիվներն ել զանգում են զյուղիորհրդի արամաղրաթյան տակ և հանդիսանեամ են անտակոսային։ Այդ գումարների վրա խնայդրամարկղը տոկոսներ չեն ամերացնում։

Զանգան տեսակի մուծումներ բնդուներու և զյուղական բյուջեի «ԱՀ» հաշվին զրանցելու մերարկը յայ առհմանված և հետեւալ կտրդը՝ խնայդրամարկղը բնդուներթյունը կատարում և վճարովների հայտարարություն հիմոն վրա, հարկացին թերթի կամ մի այլ զրագօր փաստաթղթի համեմատ։ Փաստաթղթի բնցուկայության զեղքում խնայդրամարկղը բացում և ընդունակությունը հարկի, վորի մեջ զբանցվում են այդ գումարներ։

Խնայդրամարկղը կատարում և զբամի բնդուներթյունը, զրանցելով այդ համապատասխան հաշվի վրա, բայց վոչ մի հաշվարկ վճարման վատառաթղթերով նա չի կատարում։ Նման հաշվարկներ պետք են կատարվեն իրեն՝ պյուղխորհրդի կողմէց, վորը վարում և առանձին վճարովների անձնական հաշիվները՝ դյուզանահասական հարկի, այլ վճարումների և բնդիմահարկման միջոցների։

Գործառնուկան որվա ընթացքում մուծված բոլոր զբումարների մասին խնայդրամարկղը, ըստ հնարավորության հենց նույն որը, բայց համենայն դեպս հետեւալ յայ որքա սկզբից վոչ ուշ, հայտնում և դյուղխորհրդին և միաժամանակ ուզարկում նրան իսկական փաստաթղթերը, բեյսարները և ցանկերը։

«Բ» հաշվով մուծված զնումարների մասին խնայդրամարկղը հայտնում են պյուղխորհրդին նույն ժամկետներում։

Բոլոր յերեք հաշիվներից վճարումներ կատարվում են խնայդրամարկղների կողմէց միայն հաշիվների վրա մնացած զբումարների սահմաններում։ Գյուղխորհրդի կողմէց վոչ մի պահանջ խնայդրամարկղին պյուզական բյուջեյի հաշիվների վրա յեղած մնացորդից

ամիելի չափով զումարներ տալու վերաբերյալ չի կարող տուաջառըին է: Խնայդրամարկղի կողմից բոլոր վեճարումները կատարվում են չեկերով, վոր ստորագրվում են յերկու անձանց կողմից— նախաղահի և քարտուղարի, կամ հաշվային (ֆինանսային) աշխատավորի կողմից: Բայց վորագնետն հաճախ գյուղխորհրդում լինում են մեռյան յերկու աշխատակից, ապա կանոնները թույլարում են բայց չեկի վճարումներ կատարել մեկ ստորագրությամբ՝ նախաղահի կամ, քարտառղարի: Զեկերը հաստատվում են դյուղխորհրդի կնիքով: Ստորագրությունների և կնիքի որինակները նախորոք դյուղխորհրդարդը հայտնում ե խնայդրամարկղին:

Փոստի միջոցով դյուղխորհրդի հաշվին մուծվող զումարների նկատմամբ պահպանվում ե հետեւյալ կարգը:

Դյուղխորհրդարդը տալիս ե խնայդրամարկղին համատարբադիր՝ փոստավ նրա համցելով ստացվող բուլը զումարները ստանալու համար: Խնայդրամարկղը, ստանալով վորխաղբումները, դրանցում և դրանք համապատասխան հաշիվների վրա և հենց նույն որը հայտնում և դյուղխորհրդին ստացված զումարի մասին:

Ինքնահարկման միջոցների ընդունման և հաշվառման վերաբերյալ դյուղխորհրդի և խնայդրամարկղի միախարաբերությունները հանդում են հետեւյալին՝ վճարումների ընդունելությունը խնայդրամարկղների կողմից կատարվում և դյուղխորհրդի կողմից վճարողներին ուղարկված ժանուցաղբերի հիման վրա, ըստ վորում, ինքնահարկման վճարումների ժամկետները հայտնվում են խնայդրամարկղին դյուղխորհրդի կողմից նախորոք: Վճարումները ընդունելու ժամանակ մուծումը վճարողի կողմից ժամկետից ուշ կատարվելու վեպքում, ինայդրամարկղը հաշվարկում և տույժը, կազմում և ցուցակ ինքնահարկման վճարումների մուծումները գրանցելու համար: Ցուցակի մեջ սահմանում ե դյուղխորհրդարդը, համաձայնեցնելով խնայդրամակղի հետ: Այդ ցուցակի մեջ համենայն վեպս պետք ելինեն հետեւյալ սյունակները:

1) №№ ըստ կարգի.

2) Ազդանուն, անուն հայրանուն.

3) Այն գյուղի անունը, վորի համար մուծվում է ինքնահարկման վճարումը.

4) Անցրու տարբիների ինքնահարկման դումտրների սպառիկները.

5) Բնթացիկ տարիշա ինքնահարկման դումտրները.

6) Ժամանակին չվճարված ինքնահարկման համար բարզված տույժի դումտրը.

7) Բնդումնել մաւծումները:

Վերջին դումտրը հանդիսանում է 4-րդ, 5 և 6-րդ ոյունակների դումտրը:

Խնայդրամարկղի կողմից բնդումնված ինքնահարկման դումտրների ցուցակը ամեն որ համապատասխան՝ սառապրությաններով ուղարկված և գյուղխորհրդին: Այդ ցուցակի գյուղխորհրդարդը հաշվի յև անում ամեն մի վճարողի մուծումը դյուղական բյուջեյի հաշվին:

Գյուղատնտեսական վարկի և ապահովագրական վճարումների ընդունման և հաշվառման ժամանակ, վոր կատարփում և բառ հարկաթերթների և ապահովագրական ծանուցազրի, խնայդրամարկղը կատարում և նույնպես բոլոր հաշվիները (այն Ե՞ տույժի բարդումը, ապառիկների հաշվարկումը, վորոշում և գյուղական բյուջեյին հատկացիւթյուն հատկացիւթյուն գումարը և այլն):

Մուծվող վճարները խնայդրամարկղի կողմից դրանցվում են առանձին ցանկի մեջ, վորը ամեն որ (որ վերջում կամ մյուս որիտ սկզբից վոչ ուշ) ուղարկվում և գյուղխորհրդին: Այդ ցանկը գյուղխորհրդի համար ծառայում և վորպես ծանուցազրի այն մասին, վոր գյուղական բյուջեյի «Ա» հաշվի վրա մուծված և գյուղատնտեսական հարկի: Գյուղատնտեսական հարկի գումարները գյուղական բյուջեն կարող են չ:

Վոչ լրիվ չափով: Նրանց մի մասը կարող է մուծվել շըբանային բյուջեն: Բայց և այնպէս սահմանված մասնաման առկոսի առկայության պարագային մատնանշված ցանկի համեմատ գյուղական բյուջեյի ընթացիկ հաշվին դրանցվող գումարների վերաբերյալ հաշվարկ կատարելը չափազանց հեշտ է:

Գյուղխորհուրդը պարտավոր և մատակարարել խնայդրամարկղը հարկի բլանկներով, վոր ստանում է շըբանային Փինբաժնից:

Խնայդրամարկղի բացակայության դեպքում, կամ

ուեխնիկական պատճառներով գյուղական բյուջեյի սպասարկումը որինական ծավալով իր վքա վերցնելու անհնարինության դեպքում, բոլոր վճարումների ընդունելությունը կատարում է ինքը գյուղխորհուրդը, վորը պարտավոր և շրջանային Փինըաժնի կողմից սահմանված ժամկետում հանձնելու բոլոր իրեն չպատկանող դաւաբները այն վարկային հիմնարկներին, վոր կը մատնանչի նույն շրջանային Փինըաժնինը:

Գյուղխորհուրդին պատկանող միջոցներից կատարում են ծախքեր՝ հաստատված բյուջեյի և յեռամսյառ ամսական զբամարկղային ծրագրերի սահմաններում: Դրամական միջոցների մնացորդները նույնպես պետք ե պահպին վարկային հիմնարկներում: Մասնավորապես ինքնահարկման գումարները պահպելու համար անպայման պետք ե հանձնվին խնայողական դրամարկղին (ԽՍՀՄ Փժկ. 1930 թ. նոյեմբերի 14-ի շրջարականը):

Այն դեպքում, յերբ վերև թված պատճառների շնորհիվ գյուղխորհուրդին կից ստեղծվում է գրամարկղ, վերջինս կատարում է բոլոր գործարքները, վոր վերբերում են միասնական գյուղատնտեսական հարկի, ապահովագրական վճռումների, ինքնահարկման գումարների, տեղական յեկամուտների և հարկերի և այլ վճռումների ընդունելություններին:

Գանձապահի պարտականությունները, հատուկ աշխատակցի բացակայության դեպքում, կատարում ե գյուղխորհուրդի քարտականը:

• ԵՐԱԾՈՒՅԻՉԻ ՆԱԽԱՀԱՅԱԿԱՆԵՐ

Յեթև աարվա ընթացքում կծագեն հաստատված բյուջեյով չնախատեսված նոր անհետաձգելի ծախսեր, ապա գյուղխորհուրդը այդ ծախքի համար պետք է կադմի լրացուցիչ նախահաշիվ, բայց լրացուցիչ նախահաշիվ կազմելը թույլատրվում է այն գեպքում, յերբ այդ ծախքերը ծածկելու համար հնարավորություն կալրացուցիչ յեկամուտներ ստանալու: Վերջինները կարող են ստաջանալ հետեւյալ գեպքերում՝

1) Յեթև գյուղխորհուրդը տարվա ընթացքում կոհայտաբերի նոր յեկամտային աղբյուրներ, վորոնք

Հաստագում բյուջեյի յեկամառյին մասում չեն նույնականացվում:

2) Յեթե յեկամառյին մասի կանորումը միանդամային ակնհայտորեն ցույց կատ, փոր յեկամառյին փաստացի մուծումները կղերազունցին բյուջեառյին յենթագրամբ լուները, այսինքն կկառարութին պերամուծումներ, և

